# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 43 (1793) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 19, 2016
VOLUME 36, NO. 43 (1793) SATURDAY, NOVEMBER 19, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Փոքրամասնութեան Ձայներով Ընտրուած Նախագահը

Միացեալ Նահանգներու մէջ նախագահ կ'ընտրուի ան, որ կ'ապահովէ առնուազն 270 ընտրական պատուիրակներու ձայները: Իւրաքանչիւր նահանգի համար սահմանուած է իր բնակչութեան թիւի համաձայն ընտրական պատուիրակի ձայն ու այս պատուիրակները, Դեկտեմբեր 19-ին հաւաքուելով իրենց նահանգներուն մէջ, Տանըլտ Թրամփի ընտրութիւնը պիտի դարձնեն պաշտօնական:

Ընտրական այս քիչ մը տարօրինակ դրութիւնը հաստատուած է 1700-ական թուականներուն, որպէսզի բազմամարդ նահանգները առանձին չկարողանան տիրապետել նախագահական ընտրութիւններու գործընթացին:

Պատմութեան ընթացին, շատ քիչ բացառութիւններով, ընտրեալ նախագահը նոյն ատեն ստացած է ե՛ւ պատուիրակներու ե՛ւ ժողովրդային քուէներու մեծամասնութիւնը: Սակայն, այսօրուայ դրութեամբ Հիլըրի Քլինթոն ունի 800 հազար ժողովրդային ձայնի առաւելութիւն: Որոշ գնահատականներով, Քլինթոնի առաւելութիւնը կրնայ բարձրանալ մինչեւ 1.5-2 միլիոն ձայնի, երբ հաշուուին միլիոնաւոր յաւելեալ քուէները, որոնք տակաւին ստուգման կարիք ունին:

Մինչ այդ, ընտրութիւններէն մէկ շաբաթ անց, Ամերիկայի տարբեր քաղաքներուն մէջ, հազարաւորներու մասնակցութեամբ կը շարունակուին բողոքի ցոյցերը՝ Թրամփի ընտրութեան դէմ: Նման տեսակի ցոյցեր եզակի են այս երկրի պատմութեան մէջ: Սակայն, եզակի է նաեւ ընտրեալ նախագահը: Ցուցարարները կը բողոքեն, ոչ թէ ընտրութիւններու արդիւնքները վիճարկելու համար, այլ անոնք փողոց իջած են զգուշացնելու համար նորընտիր նախագահին, որպէզի ան շատ յառաջ չերթայ իր ծայրայեղական ծրագիրներուն մէջ, այլապէս յաջորդ չորս տարիները իր համար պիտի ըլլան փոթորկոտ:

Ցուցարարներու ոգեւորութեան պատճառներէն մին է նաեւ այն իրողութիւնը, որ Թրամփ չունի ժողովրդային մանտաթ՝ սանձարձակ ղեկավարելու համար երկիրը ու պատրաստ են ամէն քայլափոխի ընդդիմանալու՝ նոր վարչակազմին, այն յոյսով, որ Թրամփ կը դառնայ միայն չորս տարուայ նախագահ:

Միւս կողմէ, քաղաքական շրջանակներու մօտ դարձեալ սկսած է քննարկուիլ ընտրական պատուիրակներու ժամանակավրէպ դրութենէն ձերբազատուելու եւ ժողովրդային ձայներուն վրայ ապաւինելու անհրժեշտութիւնը, որպէսզի նախգահները ընտրուին մեծամասնութեան ձայներով:

**«ՄԱՍԻՍ»**

## Ատրպէյճանի Նախագահը Կը Շարունակէ Սպառնալ Հայաստանին

*Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ հայկական կողմին կրկին սպառնացած է նոր պատերազմով:*

*Անցնող շաբաթավերջին, Ֆիզուլիի շրջանը կատարած իր այցի ընթացքին, Ատրպէյճանի նախագահը շարք մը ելոյթներ ունեցած է զինուորականներու եւ Ֆիզուլիի բնակիչներու հետ հանդիպումներու ժամանակ: Ալիեւ ամէն անգամ շեշտած է որ, «Ատրպէյճան պիտի վերադարձնէ իր տարածքները այնպէս, ինչպէս վերադարձուց Լելէ Թեփէն»:*

*«Եթէ հայերը եզրահանգումներ չընեն ապրիլեան մարտերէն յետոյ, ապա իրենց կը սպասէ բազմաթիւ շատ յաջող գործողութիւններ՝ Լելէ Թեփէի օրինակով»,- հպարտացած է Ատրպէյճանի նախագահը:*

*Ատրպէյճանական լրատուամիջոցներու հաղորդած լուրերուն համաձայն, նոյն օրը, երբ Ատրպէյճան սկսած է լայնածաւալ զօրավարժութիւններու առաջին փուլը, նախագահ Ալիեւ այցելած է Ֆիզուլիի շրջանի առաջնագիծ՝ գործնական իրադրութեան ծանօթանալու նպատակով:*

*Նոյն ժամերուն ղարաբաղեան կողմը հաղորդած էր ատրպէյճանական զինուժի կողմէ հրադադարի խախտումներու մասին:*



Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ

Շար.ը էջ 5

## Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը Խստիւ կը Դատապարտէ Էրտողանի Իշխանութիւններու Բռնութիւնները

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը մտահոգութեամբ կը հետեւի Թուրքիոյ մէջ տեղի ունեցող քաղաքական զարգացումներուն:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը կը գտնէ, որ Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութեան (ԺԺԿ) ղեկավարներու եւ երեսփոխաններու ձերբակալութիւնը բացայայտ ոտնահարում է ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներուն. իսկ զանգուածային անկախ լրատուամիջոցներուն բռնի փակումը՝ յստակ ոտնահարում խօսքի ազատութեան:

Ձախող յեղաշրջումի պատրուակով յայտարարուած արտակարգ իրավիճակի քօղին տակ, յեղաշրջումին հետ կապ չունեցող աշխարհիկ (լայիք), ազատական, ձախակողմեան եւ նոյնիսկ իսլամական ընդդիմադիր հայեացքներու տէր մարդոց կամայական գործէ արձակումները եւ անոնց դէմ դատական գործեր յարուցանելը, տեղական ինքնակառավարման մարմիններու ղեկավարներու պաշտօնազրկումներն ու ձերբակալութիւնները դարձած են Թուրքիոյ առօրեայ լուրերուն վերնագիրները: Մէկ խօսքով, այսօր Թուրքիոյ մէջ անդամալուծուած են մարդկային իրաւունքներու ամենատարրական սկզբունքներն ու չափանիշները եւ երթալով երկրէն ներս կը մեծնայ բռնատիրութեան հաստատման վտանգը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը խստիւ կը դատապարտէ Էրտողանի իշխանութիւններուն սանձազերծած բռնութիւններն ու ձերբակալութիւնները եւ իր զօրակցութիւնը կը յայտնէ Թուրքիոյ մէջ խօսքի ազատութեան, ժողովրդավարութեան եւ ազգային ինքնորոշման համար պայքարող ազատախոհներուն, ձախակողմեաններուն եւ ազգային փոքրամասնութիւններուն, այն հաստատ համոզումով, որ անոնց միջեւ ստեղծուած ու իր զարգացման ընթացքին մէջ գտնուող դաշինքը չի փշրուիր էրտողանեան բռնարարքներուն դիմաց եւ ուշ կամ կանուխ պիտի տայ իր արդիւնքը:

Միւս կողմէ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը անբաւարար կը գտնէ միջազգային ընտանիքի ցարդ ցուցաբերած արձագանքը՝ Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութեան (ԺԺԿ) ղեկավարներու եւ երեսփոխաններու ձերբակալութեան առթիւ ու կոչ կ'ուղղէ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ Եւրոպական Միութեան՝ չբաւարարուիլ միայն խոր մտահոգութիւն յայտնելով, այլ ուղղակի պահանջել անոնց անյապաղ ազատ արձակումն ու ամեն տեսակի քաղաքական հալածանքներու կասեցումը:

**ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**
**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**
**Նոյեմբեր 11, 2016**

## Պրիւքսէլ Կը Մեղադրէ Անգարան՝ Ապրիլեան Պատերազմին Ատրպէյճանին Աջակցելուն Համար




*Եւրոպական Միութեան Պրիւքսէլի կեդրոնատեղիէն հրապարակուած զեկոյց մը կը մեղադրէ Անգարան՝ ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքին Ատրպէյճանին աջակցելուն համար:*

*Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան վերաբերեալ հրապարակուած տարեկան զեկոյցին մէջ, ընդհանուր առմամբ գնահատական տրուած է Թուրքիոյ վարած տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներուն:*

*Փաստաթուղթին համաձայն, Եւրոպական Միութեան անդամակցիլ ցանկացող Թուրքիոյ մէջ յետընթաց արձանագրուած է շարք մը ոլորտներու մէջ, որոնց շարքին՝ արդարադատութեան, մարդու իրաւունքներու, խօսքի եւ մամուլի ազատութեան գծով:*

*Զեկոյցի Հարաւային Կովկասին եւ Կեդրոնական Ասիոյ նուիրուած հատուածին մէջ նշուած է, որ պաշտօնական Անգարան բացայայտ աջակցութիւն ցուցաբերած է Ատրպէյճանին՝ 2016-ի Ապրիլին Լեռնային Ղարաբաղի սահմանին վրայ տեղի ունեցած բախումներու ընթացքին:*

*Զեկոյցի հեղինակները առանձին տողով նաեւ շեշտած են թէ, Թուրքիոյ իշխանութիւնները կը շարունակեն կոշտ արձագանքել որեւէ երկրի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման փաստին:*

*Թուրքիոյ մէջ ապրող հայ համայնքի հարցերուն անդրադառնալով, զեկոյցի հեղինակները կ'առանձնացնեն նաեւ Հայոց պատրիարքութեան առաջարկը՝ երկրի համալսարաններէն մէկուն մէջ հայ լեզուի ամպիոն բանալու վերաբերեալ, որ խոչընդոտներու կը հանդիպի:*

*Փաստաթուղթի վերաբերեալ պաշտօնական Անգարայի խիստ արձագանքը չուշացաւ: «Այդ զեկոյցը միակողմանի է եւ կը պարունակէ անընդունելի ձեւակերպումներ: Մենք պատրաստ ենք ընդունիլ կառուցողական քննադատութիւն, սակայն զեկոյցները, որոնք Թուրքիան նեղութեան մտնելու համար են, կարելի չէ ընդունիլ», - յայտարարած է Թուրքիոյ փոխվարչապետը:*

*Թուրքիոյ եւ Եւրոպական Միութեան երկիրներուն միջեւ յարաբերութիւնները կտրուկ վատթարացան, Յուլիսին տեղի ունեցած յեղաշրջումի ձախող փորձէն ետք:*

# Հռոմի Պապը Կարդացել Է Հայ Հարուստների Դատավճիռը

ԳԱՌՆԻԿ ԳԷՈՐԳԵԱՆ

Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը կաթոլիկ եկեղեցու անունից ներողութիւն է խնդրել բոլոր աղքատներից, որոնցից երես են թեքում քրիստոնեաները:

«Ես ներողութիւն եմ խնդրում այն քրիստոնեաների համար, որոնք, հանդիպելով աղքատ մարդու կամ շրջապատի աղքատութեան հետ, երես են թեքել նրանցից»,- ասել է Հռոմի Պապը Վատիկանում կայացած արարողութեան ժամանակ, որին ներկայ են գտնուել 22 երկրներից ժամանած մօտ 4000 աղքատներ:

Այս տեղեկութիւնը մեզ՝ Հայաստանում ապրողներիս համար անհաւատալիութեան աստիճանի օտար է: Որովհետեւ մենք ապրում ենք երկրում, որտեղ Հայ Առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականութիւնը ոչ միայն՝ աղքատների ու տառապեալների կողքին չէ, այլեւ՝ աղքատացնողների ու տառապեցնողների կողքին է: Ոչ թէ ուղղակի կողքին է, այլ նրանց շարքերում: Նրանց շարքերում ոչ թէ ուղղակի կանգնած է, այլ նրանցից մէկն է:

Ոչ միայն թուաբանօրէն ու գլխաքանակով, այլ նաեւ բարքով ու կենցաղով, շուայտութեամբ ու ցինիզմով: Մեր եկեղեցու սպասաւորների աղօթքների բարձրութիւնն ուղղակի համեմատական է պատարագներին ներկայ պաշտօնեաների հիերարխիայի աստիճաններին. որքան բարձր են որպէս ձեւ եկեղեցի այցելողներից պաշտօնեաները, այնքան բարձր են հնչում որպէս ձեւ արտասանուող աղօթքները: Որովհետեւ մեր եկեղեցին, ինչպէս հանրային կեանքի կազմակերպման մնացած ինստիտուտները, բովանդակութիւնից հեռացել է անդառնալիօրէն՝ բովանդակութեան դատարկութիւնը լցնելով ձեւով: Մեր եկեղեցին դարձել է եկեղեցի կառուցող օլիգարխների սպասաւորը: Որովհետեւ ու այն պատճառով նաեւ, որ մեր եկեղեցին դարձել է առաջին հերթին՝ հոգով աղքատների, գրպանով հարուստների սպասաւորը:

Ու այդպիսին դառնալով՝ կորցրել է հոգեւոր հարստութեան ու ինչքի անցողիկութեան ու ընչամոլութեան մեղաւորութեան մասին խօսողի, ոչ թէ ծիսական խօսողի, այլ ճշմարտութիւնն արտայայտողի առաքելութիւնը: Միեւնոյն ժամանակ՝ եկեղեցու հիմնական յաճախորդներին՝ քաղաքական ու տնտեսական վերնախաւի անդամներին, ներշնչել է, որ եկեղեցի կառուցելով ու մատաղ բաժանելով՝ կարելի է քաւել աղքատներից երես թեքելու մեղքը:

Կապիտալիստական կացութաձեւը, այո, հարուստների ու աղքատների հասարակութիւն ունեցող կարգ է: Բայց որպէս հանրակարգ՝ կապիտալիզմը հարուստներ է ծնում առաջին հերթին՝ մրցակցութեան արդիւնքում, որը, այո, երբեմն լինում է դաժան, երբեմն խժռում է անգթօրէն, բայց՝ խաղի կանոնի հաւասարութեան պարագայում: Դա այդ հաւասարութեան ապահովումն է, մեծ հաշուով, պետութեան դերը կապիտալիստական հասարակարգով երկրում: Ու Հայաստանն այդ իմաստով շատ հեռու է կապիտալիզմից, որին յղում անելով՝ մեր օլիգարխներն ու նրանց սպասաւորներն արդարացնում են իրենց հարստութիւնն ու մեծամասնութեան աղքատութիւնը: Հայաստանում հարուստները հարստացել են ոչ թէ մրցակցութեամբ ու ձեռներեցութեան ճիրքով, այլ լրիւ ուրիշ ճիրքերի գործադրմամբ նրանց շրջանակում յայտնուելու արդիւնքում, ովքեր դուրս են մրցակցութիւնից եւ ովքեր միւսներից աւելի «հաւասար են»:

Իսկ պետութիւնը կամ նրա հետ նոյնացուած իշխանութիւնը ոչ միայն չի ապահովել այդ հարուստ փոքրամասնութեան ու աղքատ մեծամասնութեան միջեւ հաւասարակշռութիւնը՝ գոնէ սովածների հասարակութիւն չունենալու չափով, այլ ամէն կերպ նպաստել է հարուստների՝ աւելի հարստացմանը, ու աղքատների՝ աւելի աղքատացմանը, որը սնանկացումն է՝ ֆինանսական տերմինաբանութեամբ, եւ սովեալութիւնը՝ մարդկային լեզուով: Իշխանութիւնն արել է դա, որովհետեւ նոյնական է հարուստների հետ: Հայաստանում լինել իշխանաւոր՝ նշանակում է՝ լինել հարուստ, եւ լինել հարուստ՝ նշանակում է՝ ունենալ իշխանաւոր դառնալու հնարաւորութիւն:

Որովհետեւ Հայաստանում մտքի, գաղափարի, ծրագրի, ամենայնի իշխանութիւնից աւելի զօրեղ է փողի իշխանութիւնը: Ու դա ոչ թէ կապիտալիստական հանրակարգի ցուցիչն է, ինչպէս կ'արդարանան հարուստ իշխանաւորները կամ իշխանաւոր հարուստները, այլ փոքրամասնութեան կողմից գաւթուած իշխանութեան, բովանդակութեամբ՝ տոտալիտար, ցուցքով՝ ժողովրդավարական իշխանութեան ախտորոշումը: Դա իշխանութեան, վերնախաւ կոչուող համակարգի այն ընդհանրական տարողութիւնն է, որին պատկանում է նաեւ Հայ Առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականութիւնը, որը բովանդակութեամբ դարձել է աղքատներից երես թեքողների արարողակարգային էլեմենտներից մէկը: Թիկնազորի հոգեւորական տեսակը, մի խօսքով:

Հայաստանի պրոբլեմը ոչ թէ նիւթապէս աղքատների մեծամասնութիւնն է, ինչպէս թւում է առաջին հայեացքից, այլ հոգեպէս աղքատների ու նիւթապէս հարուստների փոքրամասնութիւնը, որը բացառում է մեծամասնութեան՝ երբեւէ աղքատութիւնից դուրս գալու հնարաւորութիւնը:

Այդ փոքրամասնութեան ունկերին անհասանելի են Հռոմի պապի աղօթքները, որոնք նաեւ նրանց դատավճիռն են, որովհետեւ նրանց մեծամասնութիւնն ամէն ինչ գնելու կարողութեան դիմաց վաճառել է հոգին: Նրանք չեն կարող ներողութիւն խնդրել աղքատներից, որովհետեւ նրանց բոլոր խնդրանքները վերջացել են այն անշօշափելի մատերիայի մէջ, որը կոչւում է իշխանութիւն: Փողի իշխանութեան սպասաւորները չեն կարող ներում հայցել փող չունեցողներից:

Աստուած նրանց օգնական:

« 168 ԺԱՄ »

# Ալիեւը Սկսեց. Ինչ Է Պատրաստում Սերժ Սարգսեանը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Ատրպէյճանական լրատուամիջոցները յայտնել են, թէ Իլհամ Ալիեւը մեկնել է առաջնագիծ, ծանօթացել օպերատիւ իրավիճակին, նուէրներ յանձնել մարտական խնդիրների իրականացման ժամանակ աչքի ընկած ծառայողներին:

Ապրիլի պատերազմից յետոյ Ալիեւը կարծես թէ երկրորդ անգամ է մեկնում առաջնագիծ: Առաջին անգամ նա այդ բանն արեց Ապրիլի վերջերին, երբ իրավիճակը սահմանին, յատկապէս հիւսիս-արեւելեան ուղղութեամբ բաւական լարուել էր, տեղի էր ունենում ինտենսիւ արկակոծում եւ հրետանակոծում: Այդ ժամանակ Ալիեւը տիկնոջ հետ այցելել էր Թալիշին սահմանակից Թերթերի շրջան, որտեղ նրան ցուցադրել էին հայկական զինուժի պատասխանի հետեւանքները:

Հայկական զինուժը այդ օրերին իրականացրել էր պատժիչ գործողութիւններ, ատրպէյճանցիներին ստիպելով հանդարտուել:

Այժմ Ալիեւը երկրորդ անգամ է այցելում սահման, կրկին որոշակի լարուածութեան պայմաններում: Արդէն մի քանի շաբաթ Արցախի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդագրութիւններով յայտնում էր, որ Ատրպէյճանը սկսել է յաճախ կրակել, նոյնիսկ կատարել էր դիվերսիոն ներթափանցման փորձեր:

Նախօրէին տեղի էր ունեցել Ապրիլից յետոյ առաւել ծաւալուն արկակոծում, ընդ որում նաեւ ցերեկային ժամերի ընթացքում՝ Թալիշի ուղղութեամբ: Ներկայում, սահմանային վիճակին զուգահեռ, Ատրպէյճանը նաեւ սկսել է ծաւալուն զօրավարժութիւն, որում ներգրաւուած է մօտ 60 հազար զօրք, 150-ից աւելի տանկեր, օդուժ, այլ տեխնիկա, մի քանի հարիւր միաւոր հրետանային կայանք: Դա իհարկէ չի նշանակում, որ այդ բոլորը կեդրոնացած են մէկ տեղում, դրանք ներգրաւուած թուերն են, ինչը ամենեւին չի նշանակում կեդրոնացում նոյն ժամին նոյն վայրում: Բայց, բոլոր դէպքերում հակառակորդի այդօրինակ վարժանքը հայկական կողմից պահանջում է խիստ զգօնութիւն:

Նախօրէին Արցախ էր մեկնել Հայաստանի արտգործնախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը, իսկ երեկոյեան Արցախի ԱԳՆ-ն տարածեց հաղորդագրութիւն, որով միջազգային հանրութիւնից պահանջում է դատապարտել Ատրպէյճանի գործողութիւններն ու անել ամէն ինչ լարուածութեան աճ թոյլ չտալու համար: Հայաստանի ԱԳՆ-ն օրեր առաջ յայտարարել էր, որ Ատրպէյճանը զօրավարժութիւնն անցկացնում է միջազգային կարգի խախտումով:

Մէկ այլ ուշագրաւ հանգամանք է այն, որ մէկ-երկու շաբաթ առաջ Հայաստանի եւ Արցախի քաղաքական իշխանութիւնը սկսեց խօսել Թալիշի վերաբնակեցման անհրաժեշտութեան մասին: Ինչն էր այդ խօսակցութեան ինտենսիւացման պատճառը, պարզ չէր: Արդեօք ատրպէյճանցիների ակտիւութեան նպատակը Թալիշի վերաբնակեցման ուղղութեամբ հայկական քայլերը կասեցնելն է, թէ՞ ատրպէյճանցիները մտավախութիւն ունեն, որ վերաբնակեցման համար հայկական զինուժը կը փորձի յատուկ օպերացիա իրականացնել Թալիշի մօտ ատրպէյճանցիների դիրքը վերցնելու ուղղութեամբ, որը նշանառութեան տակ է պահում գիւղը եւ վտանգում այնտեղ քաղաքացիների բնակեցումը:

Ընդհանրապէս, ապրիլեան պատերազմը, իր առաջացրած որոշակի ընդհանուր առեղծուածային հարցերով հանդերձ, մասնաւորապէս Թալիշի ուղղութեամբ բաց է եւ անորոշ է պահում իրավիճակը: Այդ պատերազմում Ատրպէյճանին յաջողուեց կատարել դիրքային մի քանի փոփոխութիւն՝ թէ հիւսիսում, թէ հարաւում: Վիեննայի հանդիպումից յետոյ, որտեղ համանախագահները խօսեցին 1994 թուականի հրադադարին վերադառնալու անհրաժեշտութեան մասին, ասել կ'ուզի այդ հրադադարի ընթացքում հաստատուած ստատուս-քուոյի մասին, Սանկտ-Պետերբուրգի հանդիպմանը Ռուսաստանի նախաձեռնութեամբ կարծես թէ փորձ արուեց որոշակի նոր վեկտոր հաղորդել հետպատերազմական իրավիճակին:

Ուշագրաւ էր, որ Սանկտ-Պետերբուրգից անմիջապէս յետոյ Սերժ Սարգսեանը մեկնեց Արցախ եւ այցելեց հարաւային սահմանագիծ: Ընդ որում, սովորաբար դիրքեր կամուֆլիաժով այցելող Գերագոյն գլխաւոր հրամանատարը Արցախի հարաւային սահման այցելեց կոստիւմով: Թէ ինչ ազդակ էր դա պարունակում, կամ Սերժ Սարգսեանը պարզապէս չէր ուզել ժամանակ կորցնել Սանկտ-Պետերբուրգից յետոյ զգեստափոխուելու

Շար.ը էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Կոռուպցիայի Դէմ Պայքարի Նոր Խորհրդից Յոյս Չկայ

Արդէն յայտնի է, որ կոռուպցիայի դէմ պայքարի խորհրդում փոփոխութիւններ են տեղի ունեցել, այլեւս խորհրդի անդամ չեն նախկին վարչապետ Յովիկ Աբրահամեանը, ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրեանը եւ նախկին գլխաւոր դատախազ Գէորգ Կոստանեանը, ի պաշտօնէ նրանց համապատասխանաբար փոխարինում են վարչապետ Կարէն Կարապետեանը, ֆինանսների նախարար Վարդան Արմեանը եւ գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանը:


Հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավար Վարուժան Հոկտանեան

«Առաջին Լրատուականի» հետ զրոյցում «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ղեկավար Վարուժան Հոկտանեանը, անդրադառնալով խորհրդի աշխատանքներին, նշեց, որ այսպիսի ինստիտուցիոնալ լուծումը՝ այնսինքն՝ որպէս կոռուպցիայի դէմ պայքարի ինստիտուցիոնալ մարմին այդպիսի խորհուրդը ինքնին ենթադրում է ցածր արդիւնաւէտութիւն եւ օգտակարութիւն:

«Ընդհանրապէս այն երկրներում որտեղ որոշակի յաջողութիւններ են գրանցուել, որտեղ կոռուպցիայի դէմ պայքարը եղել է արդիւնաւէտ, այդ երկրները գնացել են այլ ճանապարհով, նրանք ստեղծել են մասնագիտացուած հակակոռուպցիոն կառոյցներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ կառոյցի տարբեր մոդելներ կան՝ կայ ունիվերսալ մոդելը, կայ մասնագիտացուած քննչական մարմին, մասնագիտացուած կանխարգելիչ մարմին, առայժմ Հայաստանն այդ ճանապարհով չի գնացել»,- նշեց Վ. Հոկտանեանը:

Նրա դիտարկմամբ՝ հակակոռուպցիոն քաղաքականութիւն վարելու հարցում կարեւոր է քաղաքական կամքի դրսեւորումը. «Վրաստանում երբ որ Սաակաշվիլին իրականացնում էր հակակոռուպցիոն շատ լուրջ բարեփոխումներ, հակակոռուպցիոն մարմիններ չկային, եթէ կայ քաղաքական կամք, ապա արդիւնաւէտ կերպով հնարաւոր է պայքարել կոռուպցիայի դէմ եւ նուազեցնել կոռուպցիայի մակարդակը երկրում»:

«Կոռուպցիայի դէմ պայքարի նոր խորհրդից յոյսեր չունեմ, անձերի փոփոխութեամբ որակական փոփոխութիւններ չեմ ակնկալում»,- ընդգծել է Վ. Հոկտանեանը յաւելելով, որ անձերի հեռանալը չի նշանակում համակարգի հեռանալ:

Վ. Հոկտանեանի կարծիքով՝ կոռուպցիայի դէմ պայքարում կարեւոր է նաեւ հասարակութեան ակտիւ մասնակցութիւնը:

## Ընդդիմադիրները Մուրացկանութիւն Կը Որակեն Քաղաքացիներէն 1000 Դրամ Գնցելու Ծրագիրը

Ընդդիմադիր պատգամաւորները «ցինիզմ» եւ «մուրացկանութիւն» որակեցին քաղաքացիներէն ամսական 1000 դրամ գանցելու՝ իշխանութիւններու նախաձեռնութիւնը:

Խորհրդարանը սկսաւ քննել պաշտպանութեան ժամանակ զինծառայողներու կեանքին կամ առողջութեան պատճառուած վնասներու հատուցման մասին օրէնքի նախագիծը, ըստ որուն, իւրաքանչիւր աշխատող քաղաքացի վճարուող հարկերէն բացի այսուհետեւ պէտք է նաեւ իր աշխատավարձէն 1000 դրամ յատկացնէ յատուկ ստեղծուած հիմնադրամին:

Կուտակուած գումարներէն Յունուար 2017-էն յետոյ ծագած միջադէպերու, մահուան կամ առաջին կարգի հաշմանդամութեան պարագային, զինծառայողներու ընտանիքները կը ստանան միանուագ 10 միլիոն, իսկ 2-րդ կարգի հաշմանդամ դարձածները՝ 5 միլիոն դրամ: Բացի այդ զինծառայողները կը ստանան ամսական վճարներ:

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Պոստանճեանը իշխանութեան այս քայլը որակեց մուրացկանութիւն, իսկ Հայ Ազգային Գոնկրէս (ՀԱԿ) խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը՝ ցինիզմ:

Խորհրդարանէն ներս ներկայացնելով օրէնքի նախագիծը, պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան պատրաստակամութիւն յայտնեց հանդիպիլ բոլոր շահագրգիռ կողմերուն հետ եւ քննարկել օրինագիծի հետ կապուած հարցերը:

Անդրադառնալով այն հարցին, թէ ինչո՞ւ ելեւմտացոյցի հաշուին չըլլար այս քայլը, պաշտպանութեան նախարարը ընդգծեց, թէ այս կը դիտուէր ժողովրդական քայլ՝ խորհրդարանական ընտրութիւններէն առաջ: Բացի անկէ ըստ նախարարին, ելեւմտացոյցը նման ծախսեր ընելու հնարաւորութիւն չունի:

ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեան ընդգծեց, թէ այս օրինագիծով խտրականութիւն կը դրուի իրենց կեանքը մինչեւ 2017 հայրենիքի համար զոհած զինծառայողներու եւ 2017-էն յետոյ միջադէպերու զոհ դարձածներուն միջեւ:

Այս օրինագիծը չի վերաբերիր այն զինծառայողներուն, որոնք սպաննուած են ծառայակիցներու կողմէ: ԲՀԿ պատգամաւոր Էլինար Վարդանեանը այս աններելի համարեց՝ ընդգծելով, որ բանակ ուղարկուող զինուորի ծնողի համար էական չէ, թէ իր երեխան որու կողմէ սպաննուած է:

## Շարմազանով. «Դեռ Երկար Տարիներ Ղեկավարելու Է Սերժ Սարգսեանը»

Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը շարունակելու է ղեկավարել կուսակցութեան առաջնորդ, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը: ՀՀԿ Գետագոյն Մարմինի նիստից յետոյ լրագրողների հետ հանդիպմանն այս մասին ասաց ՀՀԿ խօսնակ, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը՝ անդրադառնալով Նոյեմբերի 26-ին կուսակցութեան համագումարից յետոյ սպասուելիք փոփոխութիւնների վերաբերեալ հարցին:«Ես միայն կարող եմ ասել, որ կուսակցութիւնը շարունակելու է ղեկավարել Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանը: Մնացածը կ'իմանաք համագումարի օրը»,- նշեց Շարմազանովը:



ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

Շարմազանովի խօսքով՝ համագումարի ընթացքում որեւէ պատուիրակ չի կարող կասկածի տակ դնել, որ կուսակցութեան առաջնորդը լինելու է Սերժ Սարգսեանը: «Մենք երկար տարիներ աշխատելու ենք նրա ղեկավարութեան ներքոյ»,- նշեց նա:

Դիտարկմանը, թէ խօսակցութիւններ կան, որ համագումարից յետոյ կարող են կուսակցութեան ղեկավար երկու անձ լինել, որոնցից մէկը կը լինի կուսակցութեան, միւսը՝ խորհրդի նախագահը, Շարմազանովը պատասխանեց, որ ՀՀԿ-ին երկիշխանութիւն չի սպառնում: Նրա խօսքով՝ ՀՀԿ-ն միշտ էլ եղել է մէկ ղեկավարի քաղաքական ուժ:

## «Ուր Են Գնացել «Մարտիկ» Հիմնադրամի Փողերը». Նաիա Զոհրաբեան

Ազգային ժողովի ԲՀԿ խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեանին հետաքրքրւում է՝ որտեղ են ծախսւում Արցախի փոխվարչապետ Արթուր Աղաբեկեանի «Մարտիկ» հիմնադրամի կուտակած գումարները:


ԲՀԿ խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրաբեան

«Դուք տեղեա՞կ էք, թէ ինչ եղաւ «Մարտիկ» հիմնադրամի կուտակած գումարները: Մենք այլ պարզաբանումներ չենք ստացել, սակայն այնտեղ բաւականին լուրջ գումարներ էին հաւաքուել կրկին բարի նպատակների համար»,- Նոյեմբերի 14-ին, ԱԺ-ում զինծառայողների ֆոնդին 1000 դրամ վճարելու մասին օրինագծի քննարկման ժամանակ ասաց Նաիրա Զոհրաբեանը՝ դիմելով Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանը:

Նախարարը փորձեց խուսափողական պատասխան տալ՝ ընդգծելով, որ գոյութիւն ունեն յաջողուած եւ չյաջողուած հիմնադրամներ, իւրաքանչիւր հիմնադրամ կարող է պատասխանատուութեան կանչուել իր ծախսած միջոցների չարժը հասկանալու համար: Նաիրա Զոհրաբեանը հարցը կրկնեց, Վիգէն Սարգսեանը ստիպուած էր խոստովանել:

«Ես չգիտեմ՝ ուր են գնացել «Մարտիկ» հիմնադրամի փողերը: Կարող եմ հետաքրքրուել, քանի որ կախուած է բանակի հետ »,- ասաց նա:

## Ընտրութիւններին Քաղաքական Ո՞ր Ուժերը Հանդէս Կը Գան Դաշինքներով

«Առաջին Լրատուականը» անդրադառնալով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ կազմուելիք հաւանական դաշինքներին կը յայտնէ որ, ԱԺ ընտրութիւններից դեռեւս մի քանի ամիս առաջ արդէն իսկ ուրուագծւում է, որ ընտրութիւններին մասնակցելու են մի քանի դաշինքներ:

Մասնաւորապէս, եթէ Գագիկ Ծառուկեանը վերադառնայ քաղաքականութիւն, ապա ընտրութիւններին մասնակցելու է դաշինքով՝ «Միասնութիւն» անուան տակ, որի մէջ մտնելու է ԲՀԿ-ն, ըստ ամենայնի՝ նաեւ Խաչատուր Սուքիասեանն ու Գուրգէն Արսէնեանը:

Չի բացառւում, որ Ռոբերդ Քոչարեան-Օսկանեան տանդէմը յայտարարի դաշինքով ԱԺ ընտրութիւններում մասնակցելու մասին: Նրանց կարող է միանալ նաեւ Ամարասի Արթուրի՝ Արթուր Ալեքսանեանի նախաձեռնած շարժումը:

Իշխող ՀՀԿ-ն նոյնպէս ընտրութիւններին գնալու է դաշինքով եւ շատ հնարաւոր է, որ այն չկրի ՀՀԿ անուանումը:

Դաշինքով են հանդէս գալու նաեւ ՍԴՀԿ եւ ՀՌԱԿ-ը:

Ամենաբարդը ընդդիմադիր ուժերի միաւորումն է: «Հանրապետութեան» առաջնորդ Արամ Սարգսեանը ընդունելի է գրեթէ բոլորի համար, բայց պոտենցիալ միաւորուողները թշնամանքի հասնող տարաձայնութիւններ ունեն միմեանց հետ:

## ԼՈՒՐԵՐ

# «Թրամբի Յաղթանակէն Յետոյ Ռուս-Ամերիկեան Յարաբերութիւններու Հնարաւոր Լաւացումէն Հայաստանը Չի Շահիր». Ռ. Կիրակոսեան

*Տարածաշրջանային Հետազօտութիւններու Կեդրոնի տնօրէն, քաղաքագէտ Ռիչըրտ Կիրակոսեան համաձայն չէ այն հայ փորձագէտներուն հետ, որոնց կարծիքով՝ Տոնալտ Թրամբի յաղթանակէն յետոյ, եթէ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ յարաբերութիւնները լաւանան, ապա անկէ կը շահի Հայաստանը:*

*Ան ըսաւ. «Հայաստանը, որպէս փոքր երկիր, կարիք ունի լրացուցիչ հաւասարակշռութեան: Եթէ մենք կորցնենք Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի հետաքրքրութիւնը մեր նկատմամբ, ոչ մի բան չի կանգնեցնի Ռուսաստանին անելու նոյնիսկ աւելին, քան անում էր՝ բարելաւել Ատրպէյճանի հետ յարաբերութիւնները, վաճառել Ատրպէյճանին աւելի շատ զէնք, եւ Հայաստանին վտանգի ենթարկել: Մենք էլ կը մնանք առանց այլընտրանքի»:*



Քաղաքագէտ Ռիչըրտ Կիրակոսեան

*Ան հայ-ամերիկեան յարաբերութիւններու զարգացման հարցով կարեւորեց բանակցութեան դերը՝ անոր ուժն ու հնարաւորութիւնը ղեկավարելու Գոնկրեսին մէջ:*

*Անդրադառնալով Տոնալտ Թրամբի անկանխատեսելի քաղաքականութեան՝ Ռիչըրտ Կիրակոսեան նշեց ՝ «Դուք կը զարմանաք, երբ Ապրիլի 24-ին Տոնալտ Թրամբը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը: Տեսէք, թէ ինչպէս է լինում՝ նա առաւօտեան արթնանում է եւ ասում՝ ինչո՞ւ ոչ: Բայց դա այդքան էլ լաւ չէ Հայաստանի համար»:*

*Ամփոփելով թեման՝ ան իր մտավախութիւնը յայտնեց ՝ «Ես չգիտեմ, թէ ինչ են ասում հայ փորձագէտները ընտրութիւններից յետոյ հայ-ամերիկեան յարաբերութիւնների մասին, բայց համոզուած լինե՞մ, որ հիմա հայ կառավարութիւնը նիստերի ժամանակ քննարկում եւ վերլուծում է, թէ ինչ է կատարւում, ինչ հնարաւորութիւններ ու մարտահրաւէրներ կան: Ո՛չ, իհարկէ»:*

# Հայաստանը Կը Համարուի Ազատ Համացանց Ունեցող Երկիր

*«Ազատութեան Տուն» (Fredoom House) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակած է աշխարհի մէջ համացանցի ազատութեան 2016-ի զեկոյցը, որուն մէջ Հայաստանը 30 միաւորով կը համարուի ազատ համացանց ունեցող երկիր:*



*Իրաւապաշտպան կազմակերպութիւնը իր հետազօտութիւնը կատարած է 2015-ի Յունիսէն սկսեալ՝ աշխարհի 65 երկիրներու մէջ:*

*Երկիրներու ազատութիւնը համացանցի վրայ գնահատուած է 100 միաւորանոց սանդղակով: 0-30 միաւոր ստացած երկիրները կը համարուին համացանցի ազատութիւն ունեցող երկիրներ, 31-60 միաւոր ստացած երկիրներուն մէջ համացանցի ազատութիւնը մասնակի է, իսկ 61-100 միաւոր ստացած երկիրները կը համարուին համացանցի ազատութիւն չունեցող երկիրներ:*

*2015-ի համեմատ Հայաստանի ցուցանիշը նուազած է 2 միաւորով, որուն պատճառը Երեւանի ցոյցերու ուղիղ հեռարձակման ժամանակ ոստիկանութեան կողմէ տեղի ունեցած յարձակումներն են՝ լրագրողներու վրայ:*

*Զեկոյցին մէջ նշուած է, որ Հայաստանի մէջ ճնշումներ կը գործադրուին ինչպէս հեռուստատեսութեան, տպագիր մամուլի, այնպէս ալ առցանց նանուլի նկատմամբ: Իրաւապաշտպանները կ՚ահազանգեն, որ այս ամէնը կրնայ ազդել երկրին մէջ խօսքի ազատութեան վրայ:*

*Fredoom House-ը կը նշէ նաեւ, որ 2015-ին Ատրպէյճանի կողմէ ցանցահենային յարձակման ենթարկուած են շարք մը հայկական կայքեր, այդ կարգին՝ կառավարական:*

*Զեկոյցը նաեւ անդրադարձած է Հայաստանի Նոր Սահմանադրութեան, որ ընդունուած է՝ 6 Դեկտեմբեր 2015-ին, ուր նշուած է, որ այն կը շարունակէ երաշխաւորել խօսքի ազատութիւնը երկրին մէջ:*

*Նշենք, որ տարածաշրջանի երկիրներէն ազատ համացանց ունեցող երկիրներու շարքին է միայն Վրաստանը (25 միաւոր):*

*Ուշագրաւ է, որ Ատրպէյճանը (57 միաւոր) համարուած է մասնակի ազատ համացանց ունեցող երկիր, իսկ Թուրքիան (61 միաւոր), Իրանը (87 միաւոր) եւ Ռուսաստանը (65 միաւոր) դասուած են ոչ ազատ համացանց ունեցող երկիրներու շարքին:*






# Թուրքիա Կառուցած է Ժխտողականութեան Պատ

## Forbes-ի Անդրադարձը «Խոստում» Ֆիլմի Մասին



*Ամերիկեան հեղինակաւոր Forbes գործարքային ամսագրի հեղինակ Սթեֆան Իրիգ, ծաւալուն յօդուած մը նուիրած է Հայոց ցեղասպանութեան մասին պատմող «Խոստումը» ֆիլմին եւ անդրադարձած՝ անոր շուրջ ձեւաւորուած ժխտողականութեան մթնոլորտին:*

*«Այս մասին գրելը վտանգաւոր է: Հայոց ցեղասպանութեան մասին խօսիլը մեծ ռիսք կը պահանջէ: Այս առնուազն յոգնեցնող փորձառութիւն կ՚ըլլայ այն մասին, թէ ինչպէս ես առցանց վիրաւորանքներ, սպառնալիքներ կը ստանամ: Մինչեւ հիմա այդ արդիական էր անհատներու, ակադեմիկոսներու, արուեստագէտներու եւ աքտիւիստներու համար: Այժմ այն կարծես սկսած է գործել նաեւ հոլիվուտեան ֆիլմերու համար»,- կը գրէ հեղինակը:*

*Ան կը պատմէ, որ ընդամէնը մի քանի շաբաթ առաջ Թուրքիան լքեց Եւրոպական Միութեան մշակութային ծրագիրը, որովհետեւ տրեզտենեան սիմֆոնիք նուագախումբը պիտի յարգէր Ցեղասպանութեան զոհերու յիշատակը: Իսկ վերջերս ալ Թուրքիան կանխեց Իսթանպուլի մէջ Գերմանիոյ հիւպատոսարանէն ներս կայանալիք համերգը: Ան կը ներկայացնէ, թէ ինչպէս անցեալին Ցեղասպանութեան մասին պատմող ֆիլմերու նախագիծերը տապալած են՝ թրքական կողմի ջանքերով:*

*,«Թրքական կառավարութիւնը կառուցած է պարտադրուած լռութեան յարաբերականօրէն յաջողած պատ մը, որ վախցնելով ոչ միայն կ՚արգելափակէ թեմային ծանօթանալու փորձերը, այլեւ տարբեր միջոցներով կը կանխէ թեմայի քննարկումը: Թրքական ժխտողականութիւնը անցեալի հարց չէ: Այդ ոչ միայն ուղղակի միջամտութիւն է կառավարութեան կամ դեսպանութեան կողմէ, այլ նաեւ վախցնելու, հարկադրուած լռութեան դատապարտելու մթնոլորտ»,- ընդգծած է հեղինակը:*

*Սթեֆան Իրիգ ներկայացուցած է, թէ ինչպէս ֆիլմերու ամենամեծ առցանց հիմնակէտին՝ IMDB-ի վրայ աշխուժօրէն սկսած են գնահատել ֆիլմը այն ատեն, երբ այն դեռ սրահներու մէջ չէր յայտնուած:*

*Ան ընդգծած է, որ Հայոց ցեղասպանութեան ժխտողականութիւնը վերջին տարիներուն զարգացման տարբեր փուլերով անցած է: Այժմ ականատեսն ընկերային ցանցերու միջոցով ժխտողականութեան դրսեւորումներուն: «Ժխտողականութիւնը մուտք գործած է Թուիթըրեան ու առցանց հեռախօսային հարթակ: Եւ ցաւալի է, որ այն յաջողութիւններ կ՚արձանագրէ,- կ՚ըսէ յօդուածագիր Սթեֆան Իրիգը:*

# Ֆրանսայի Նախագահի Թեկնածուները Նոյնանման Պատասխաններ Տուած Են Հայ Համայնքը Յուզող Հարցերուն

*Ֆրանսայի մէջ լոյս տեսնող հայկական «Նիւվել Արմենի» պարբերականը Ֆրանսայի հայ համայնքի խնդիրներու հետ կապուած շարք մը հարցերով դիմած է 2017-ի գարնան կայանալիք նախագահական ընտրութիւններուն ընդառաջ աջ-պահպանողական Հանրապետական կուսակցութեան եօթ ներկայացուցիչներուն, որոնք ցանկութիւն յայտնած են առաջադրուիլ նախագահական ընտրութիւններուն:*

*Անոնց կարգին են Ֆրանսայի նախորդ նախագահ Նիքոլա Սարքոզին եւ նախկին վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնը, ինչպէս նաեւ նախագահ Ժաք-Շիրակի օրով վարչապետ եւ արտաքին գործոց նախարար Ալէն Ժիւպէն: 20 եւ 27 Նոյեմբերին, այդ թեկնածուներուն միջեւ տեղի պիտի ունենան նախնական ընտրութիւններ, որոնց արդիւնքով կը պարզուի Հանրապետական կուսակցութեան պաշտօնական թեկնածուն՝ նախագահական ընտրութիւններուն:*

*Հայկական պարբերականի հարցերէն մէկը կը վերաբերի Ապրիլի 24-ը պաշտօնապէս որպէս ազգային յիշատակի օր ընդունելուն, միւսը՝ Թուրքիոյ ժխտողական քաղաքականութեան դէմ հայ համայնքի տարած պայքարին Ֆրանսայի իշխանութիւններու հնարաւոր աջակցութեան:*

*Այս երկու հարցերու շուրջ բոլոր թեկնածուները դրական պատասխաններ տուած են, ինչպէս նաեւ յանձն առած՝ Փարիզի մէջ հայկական յիշողութեան եւ քաղաքակրթութեան կեդրոն հիմնադրել:*

*Հանրապետական կուսակցութեան թեկնածուները միեւնոյն տեսակէտը արտայայտած են նաեւ Եւրամիութեան Թուրքիոյ անդամակցութիւնը մերժելու հարցով:*

# Քոնկրեսական Ճիմ Քոսթան Թրամբի՝ ԱՄՆ-Հայաստան կապի եւ Հայոց ցեղասպանութեան մասին

*ԱՄՆ-ի նախագահ՝ Տոնալտ Թրամբի ընտրութիւնը մեծ զարմանք առաջացուցած է ոչ միայն Ամերիկայի, այլ նաեւ աշխարհի տարբեր երկիրներու մէջ: Վերլուծաբաններն ու փորձագէտները այս օրերուն կը փորձեն վերլուծել իրադրութիւնը, պարզելու, թէ ինչ կրնայ սպասել ԱՄՆ-ին ու տարբեր երկիրներու հետ անոր յարաբերութիւններուն Թրամբի օրով, երբ վերջինս՝ 20 Յունուար 2017-ին, երդման արարողութենէն յետոյ յայտարարուի ԱՄՆ-ի նախագահ:*

*ԱՄՆ-ի դեմոկրատ քոնկրեսական Ճիմ Քոսթան, որ ի դէպ ընտրութիւններու արդիւնքով վերընտրուած է, «Ամերիկայի Ձայն»-ի հայկական ծառայութեան ընտրութեան արդիւնքներու հրապարակումէն ժամեր անց հեռախօսով ըսաւ, թէ անցեալ 18 ամիսները ընդծած են Ամերիկայի մէջ առկայ պառակտումը:*

*Քոնկրեսական Ճիմ Քոսթան համոզուած է, որ ԱՄՆ-Ռուսաստան յարաբերութիւններուն մէջ փոփոխութիւն անպայման կ՚ըլլայ, սակայն լաւ թէ վատ, յստակ չէ:*

*Ինչ կը վերաբերի Իրանի հետ միջուկային հարցերով կնքուած գործարքին, քոնկրեսականը կը յիշեցնէ, որ կնքուած պայմանագիրը չէր ակնկալէր Սենաթի կողմէ վաւերացում:*

*Քոնկրեսական Ճիմ Քոսթան կ՚ըսէ, որ Քոնկրեսին մէջ հայկական հարցերով յանձնախումբը ցեղասպանութեան ճանաչման հարցը պէտք է բարձրացնէ վաղ թէ ուշ:*



ԱՄՆ-ի քոնկրեսական Ճիմ Քոսթա

*«Շատ կարեւոր է, թէ արտաքին քաղաքականութեան ինչ թիմ կ՚ընտրէ Թրամբը: Զեմ կարծում, որ Հայոց ցեղասպանութեան մասին Թրամբն ունի համապատասխան տեղեկատուութիւն: Պէտք է տեսնել, թէ ում է նա նշանակելու պետքարտուղարի պաշտօնում: Խօսակցութիւններ կան, դեռեւս չհաստատուած լուրեր, որ արտաքին գերատեսչութեան ղեկավարի պաշտօնը նա կարող է առաջարկել Ներկայացուցիչների պալատի նախկին նախագահ Նիւթ Կինկրիչին»:*

*Քոնկրեսականը կը խոստանայ Քոնկրեսի իր գործընկերներուն հետ միասին շարունակել Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու, ԱՄՆ-Հայաստան յարաբերութիւնները խորացնելու եւ Հայաստանի համար կարեւոր այլ հարցերու շուրջ ու խնդիրները լուծելու ուղղութեամբ կիրառուող ջանքերը:*

# Շաւարշ Քոչարեան: «Պաքուն Խախտել է Վիեննայի Փաստաթուղթը Զօրավարժութիւններ Անցկացնելով»

*Հայաստանի Արտաքին Գործերու փոխնախարար Շավարշ Քոչարեանի գնահատմամբ՝ Ատրպէյճանը լայնածաւալ զօրավարժութիւններ անցկացնելով կը շարունակէ ձախողութեան մատնել Վիեննայի եւ Սան Փեթերսպուրկի համաձայնութիւններու կեանքի կոչման աշխատանքները:*



ՀՀ Արտաքին Գործերու փոխնախարար Շավարշ Քոչարեան

*«Առաւել եւս Վիեննայի եւ Սան Փեթերսպուրկի հանդիպումներից յետոյ նմանատիպ զօրավարժութիւնների անցկացման համար ատրպէյճանցիները 40 օր առաջ պէտք է դիմէին, ինչը չեն արել»,- կառավարութեան այսօրուան նիստէն յետոյ լրագրողներուն ըսաւ փոխնախարար Քոչարեանը:*

*Ըստ անոր՝ մենք պէտք է միշտ պատրաստ ըլլանք հակառակորդի կողմէ որեւէ քայլի, առաւել եւս ապրիլեան դէպքերէն յետոյ:*

*Ինչ կը վերաբերի Պաքուի նախաձեռնած լայնամաշտաբ զօրավարժութեան վտանգին, Քոչարեան ըսաւ, որ այս ընդամէնը ուժի ցուցադրութիւն է: Միւս կողմէ, Ատրպէյճանը խնդիր ունի, որովհետեւ այն, ինչ կը հրամցուէր իր հասարակութեան եւ այն պատկերացումը, որ ունէր այդ երկրի ղեկավարութիւնը, ապրիլեան պատերազմը ցոյց տուաւ, որ այդ ամենեւին ալ այդպէս չէ:*

*«Կարծում եմ՝ նաեւ այդ հանգամանքը նշանակութիւն է ունեցել այդ զօրավարժութիւնները կազմակերպելու համար», աւելցուց ան:*

# Ատրպէյճանի Նախագահը

Շարունակուած էջ 1-էն

*Քառօրեայ պատերազմի ժամանակ ատրպէյճանական զինուժի կողմէն գրաւուած Լելէ Թեփէ կատարած իր այցի ժամանակ, զինուորականներու հետ հանդիպելով, Ալիեւ յայտարարած է, թէ ապագային Ատրպէյճանը մտադիր է արտադրել, ինչպէս նաեւ ներմուծել այնքան զէնք-զինամթերք, որքան անհրաժեշտ է:*

*«Եւ թող Հայաստանի ղեկավարութիւնը յոյսը չդնէ ինչ-որ մէկ ուժի վրայ, եթէ կ՚ուզեն հարցի խաղաղ կարգաւորում՝ առանց զոհերու, ապա թող լքեն մեր հողերը, մենք եւս չենք ուզեր պատերազմիլ, ընդամէնը կը ցանկանանք վերադարձնել մեր տարածքները: Մեր ներկայութիւնը Լելէ Թեփէի մէջ կը վկայէ, որ այդ օրը մօտ է»,- ըստ ատրպէյճանական ԱՊԱ լրատուական գործակալութեան, յայտարարած է Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւ:*

# Տինքի Սպանութեան Գործով Նոր Զարգացումներ

*Թուրքիոյ մէջ Տինքի սպանութեան գործով դատավարութեան ընթացքին, ոստիկանութեան հետախուզութեան նախկին պետ Ռամազան Աքիւրէքը պնդած է, թէ Պոլսոյ նախկին նահանգապետ Ճելալէտին Ճերրահը իրմէ պահանջած էր ոչնչացնել Տինքի սպանութեան նախապատրաստութեան մասին տեղեկութիւնը:*



Ռամազան Աքիւրէք

*«News.am»-ի հաղորդմամբ, թրքական «Haberturk»-ը կը գրէ, որ Տինքի սպանութեան գործով հերթական դատավարութեան ընթացքին, ուր որպէս մեղադրեալ մասնակցած են ներկայ եւ նախկին բարձրաստիճան պաշտօնեաներ, հետաքրքրական դէպք մը տեղի ունեցած է:*

*Երկու տարի կալանքի տակ գտնուող ոստիկանութեան հետախուզութեան նախկին պետ Ռամազան Աքիւրեքը յայտարարած է, թէ Պոլսոյ այն ժամանակուայ նահանգապետ Ճելալէտին Ճերրահը իրմէ պահանջած էր ոչնչացնել հետախուզական այն գրութիւնը, որ Տինքի սպանութենէն առաջ Տրապիզոնէն Սթամպուլ մեկնած են խումբ մը անձիք՝ «մեծ աղմուկ բարձրացնող» գործողութիւն մը իրականացնելու համար:*

*Ճելալէտին Ճերրահը հերքած է այս պնդումը՝ շեշտելով, թէ ինք նման բան չէ պահանջած Ռամազան Աքիւրեքէն:*

# Ինչ Եղա՞ւ, Երբ Էրտողանը Հրաւիրուեցաւ Հայոց Ցեղասպանութեան Նուիրուած Համերգին



*Տրեզտենի սիմֆոնիք նուագախումբի «Աղէտ» խորագրով համերգը՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան զոհերու յիշատակին, 10 Նոյեմբերին կ՚ունկնդրէ նաեւ հայ հանդիսատեսը: 2015-ին մեկնարկած համերգային ծրագիրը արդէն կայացած է Տրեզտենի, Պեռլինի, Պրանտենպուրկի մէջ: Երեւանեան համերգէն յետոյ՝ 13 Նոյեմբերին, համերգ մը նախատեսուած էր նաեւ Ստամբուլ, սակայն այն չեղարկուած է Գերմանիոյ արտաքին գործերու նախարարութեան կողմէն: Լրագրողներու հետ հանդիպման ժամանակ Տրեզտենի սիմֆոնիք նուագախումբի տնօրէն Մարկուս Ռինդտը, խմբավար Անտրիա Մոլինոն եւ երգահան Վաչէ Շարաֆեանը ներկայացուցին ծրագրի մանրամասները:*

*Վաչէ Շարաֆեանի խօսքով՝ այս նախաձեռնութիւնը բաւականին խիզախ ծրագիր է. «Էրտողանը մի քանի անգամ դիմել է Գերմանիայի իշխանութիւններին, որպէսզի այն փակուի, իսկ վերջերս Թուրքիայում չեղարկուեց համերգը: Էրտողանի ընդվզումը լայն արձագանք գտաւ գերմանացիների շրջանում, ինչից մէկ ամիս անց, փաստօրէն, Պունտեսթակը ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը»,- ըսաւ ան՝ աւելցնելով, որ Գերմանիոյ արտգործնախարարութիւնը Ստամբուլի մէջ չեղարկեց համերգը անկէ ետք, երբ Մարկուս Ռինդտը Էրտողանին հրաւիրեց այդ համերգին:*

*Մարկուս Ռինդտն ալ աւելցուց, որ արտգործնախարարութիւնը վախցաւ նոր խնդիրներէ, անոր համար գնաց այդ քայլին. «Մեր կարծիքով՝ Գերմանիայի իշխանութիւնները թոյլ տուեցին նոյն սխալը, ինչ 101 տարի առաջ, երբ ոչինչ չարեցին՝ կանգնեցնելու համար Ցեղասպանութիւնը»,- նշեց ան՝ աւելցնելով, որ Ստամբուլէն իրենց ըսած են՝ համերգասրահը այլեւս ազատ չէ անոնց համար:*

*«Աղէտ» համերգը տեղի կ՚ունենայ 10 Նոյեմբերին, ժամը 19:00-ին՝ Արամ Խաչատրեան համերգասրահին մէջ: Ծրագրին ներկայացուած են թուրք երգահան Ջէյնապ Կետիզլիօղլուի, Հելմուտ Օհրինկի եւ Վաչէ Շարաֆեանի ստեղծագործութիւնները:*

## Տ. Սեպուհ Եպս. Չուլճեան Թեկնածու Առաջադրուած է Պոլսոյ Հայոց Պատրիարքի Ընտրութիւններուն



*Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլճեանը յայտարարած է Պոլսոյ պատրիարքի ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրելու մասին: Չուլճեան՝ «Ակօս»-ի հետ զրոյցին ըսած է. «Որպէս հայ առաքելական եկեղեցու սպասաւոր, միաժամանակ նաեւ ծնունդով Մալաթիայից՝ թեկնածութիւնս առաջադրելու եմ Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութիւններում: Պատրաստ եմ ծառայել Թուրքիայի հաւատաւոր հայ ժողովրդին»:*

*Արքեպիսկոպոս Չուլճեանը նշած է, որ պէտք է զերծ մնալ այնպիսի քայլերէն, որոնք կրնան ազդել ընտրական գործընթացի վրայ: «Նախեւառաջ անհրաժեշտ է չկրկնել նոյն սխալները, տարբեր դիմումներով եւ կասկածելի քայլերով չ՛ազդել նախընտրական գործընթացի վրայ: Սա մի գործընթաց է, որը կախուած է մեզնից: Անհրաժեշտ է վերացնել ցանկացած ընթացակարգ, որը խոչընդոտում է ընտրական գործընթացը»,- նշած է Գուգարաց թեմի առաջնորդը:*

*Չուլճեանի խօսքով՝ պէտք է հաշուի առնել հասարակութեան շահերը եւ անձնական զգացմունքներով չառաջնորդուիլ: «Անհրաժեշտ է յարգանք ցուցաբերել ընտրողների եւ թեկնածուների իրաւունքների նկատմամբ, հաւասար ու արդար պայմաններ ապահովել թեկնածուների համար»,- յայտարարած է արքեպիսկոպոսը:*

## ՀԱԿԱՀԱՅ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊՈԼՍՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԱՏԵՐՈՒՆ




*Հերթական անգամ հակահայ գրութիւններ կը յայտնուին Պոլսոյ հայկական վարժարաններու պատերուն: Այս մասին կը գրէ «Ակօս»ը, որ նաեւ կը յայտնէ որ Պոլսոյ Մխիթարեան վարժարանի պատերուն հակահայ բնոյթի գրութիւններ յայտնուած են:*

*Ըստ աղբիւրին, ազգայնականները վարժարանի պատին գրած են. «Գիշեր մը անսպասելիօրէն Ղարաբաղի մէջ պիտի յայտնուինք»:*

*Կը նշուի նաեւ, որ այս ուսումնական տարեշրջանի սկիզբէն ի վեր յիշեալ դէպքը հայկական դպրոցներու պատերուն ռասիստական բնոյթի գրութիւններով աշակերտութեան մէջ վախի մթնոլորտ ստեղծելու արդէն երրորդ դէպքն է:*

*Յիշեցնենք, որ ամիսներ առաջ թուրք ազգայնականներ նմանատիպ գրութիւններով հանդէս եկած էին Պոլսոյ Սուրբ Խաչ Դպրեվանք եւ Քալֆայեան վարժարաններու պատերուն:*

## «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը 26 Բնակարան Նուիրաբերած է Գիւմրիի Անօթեւան Ընտանիքներուն



*«Հայաստան» համահայկական հիմնադրամը զուգահեռ իր ենթակառուցուածքային ծրագրերուն կ՛իրականացնէ նաեւ ընկերային աջակցութեան ծրագրեր: Այդպիսին է «Բնակարաններ՝ Գիւմրիի անօթեւան ընտանիքներին» նախաձեռնութիւնը, որուն արդիւնքով 26 ընտանիք քաղաքի Մուշ եւ Անի թաղամասերուն մէջ այսօր ունի բարենորոգ, կահաւորուած, ջեռուցուող, կենցաղային արուեստագիտութեամբ յագեցած բնակարան: Այս մասին տեղեկացուցին հիմնադրամէն:*

*Նախաձեռնութիւնը կեանքի կոչուած է Հիմնադրամի ԱՄՆ արեւմտեան շրջանի տեղական մարմնի եւ ARTN Shant հեռուստաընկերութեան ջանքերով, իսկ բնակարանները ձեռք բերուած են 2014-15-ին, Լոս Անճելըսի մէջ կայացած հեռուստամարաթոններու հասոյթներով: ARTN Shant եւ Շանթ հեռուստաընկերութիւններու հանգանակած գումարին իրենց առատաձեռն նուիրատուութիւններով միացած են անհատ բարերարներ Անդրանիկ Պաղտասարեանը, Վահէ Կարապետեանը, Հարօ եւ Տիանա Ճորտանները, Հայկ Քելեճեանը, Զաքար Զաղացպանեանը, Յարութ Մեսրոպեանը, Վարուժ եւ Սվետլանա Մինասեաններ ը, Սամուէլ Բալասանեանը: Անոր արդիւնքով, 22 ընտանիքներ այսօր ապահովուած են բնակարաններով:*

*Շահառուներն են՝ Կարէն Խաչատրեանի, Յովհաննէս Բաղոյեանի, Արսէն Խաչատրեանի, Դաւիթ Յովսեփեանի, Շողիկ Շապոյեանի, Երանուհի Սաֆարեանի, Շողիկ Անտոնեանի, Գոհարիկ Գոմկցեանի, Նաթալիա Ստրուկի, Աննա Մելքոնեանի, Արուսեակ Բարսեղեանի, Ռոզա Էրզրումեանի, Թերեզա Պետիշովայի, Անահիտ Մարտիրոսեանի, Ռիմա Պետրոսեանի, Այտա Ստեփանեանի, Լիանա Մուրատեանի, Սթելլա Մկրտչեանի, Ժենիա Գրիգորեանի, Ֆենիա Սահակեանի, Ռուզաննա Եղոյեանի, Նելլի Զախչեանի ընտանիքները: Եւս մէկ անօթեւան ընտանիք մօտօրէն բնակարան կ՛ունենայ: Յաջորդ հեռուստամարաթոնը նախատեսուած է կազմակերպել 2017-ին:*

*Հիմնադրամի Գերմանիոյ տեղական մարմինն ալ համաեւրոպական հեռախօսամարաթոնի միջոցաւ երրորդ տարին է, իր հանգանակութիւնները կ՛ուղղէ այս ձեռնարկին: Գերմանահայ համայնքի նուիրաբերած գումարներով մինչ այսօր Գիւմրիի մէջ ձեռք բերուած է 4 բնակարան, որուն շահառուներն են՝ Արթուր Գալստեանի, Անահիտ Սուքիասեանի, Ռուզաննա Եղոյեանի եւ Աննա Սարգսեանի ընտանիքները:*

---

*Թուրքիոյ մէջ հրապարակուող հայկական պարբերականի տուեալներով, Ժողովրդահանրապետական կուսակցութեան անդամ, խորհրդարանի պատգամաւոր Սեզկին Թանրըքուլուի՝ երկրի վարչապետ Պինալի Եըլտըրըմին ուղղուած հարցումը մինչ օրս անպատասխան մնացած է: Թանրըքուլուն խնդրած էր Թուրքիոյ վարչապետին առիթ գտնելու պարագային պատասխանել, թէ ինչ պատիժ նախատեսուած է նման քայլեր իրականացնողներու համար:*



# Հ.Բ.Ը.Մ.Ի 89-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԵՒ 110-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ






Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 89-րդ Ընդհանուր Ժողովը կայացաւ Միացեալ Նահանգներու Նիւ Եորք քաղաքին մէջ, 27-30 Հոկտեմբերին: Ընդհանուր այս ժողովին եւ անոր յարակից ձեռնարկներուն իրենց մասնակցութիւնը բերին բազմահարիւր անդամներ, միութեան Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու, Եւրոպայի եւ Միջին Արեւելքի մասնաճիւղերէն, պատգամաւորներ, ղեկավարութիւն, բարերարներ, նուիրատուներ եւ բարեկամներ: Անոնց շարքին նկատառելի էր մեծ թիւով արհեստավարժ երիտասարդներու, միջազգային ճանաչումի տիրացած աստղերու եւ Հայաստանի զարգացման ի նպաստ խարսխային ծրագիրներ իրագործող գործարարներու ներկայութիւնը, որոնք իրենց մասնակցութիւնը բերին խորհրդակցութեանց եւ հեռանկարային քննարկումներուն:

«Համընդհանուր Հայ Ազգ» բնաբանը, որ հիմքը կը կազմէր Ընդհանուր Ժողովին եւ անոր յարակից խորհրդակցական հանդիպումներուն եւ ծրագրային քննարկումներուն, իր մէջ կը խտացնէ Հայաստան, Արցախ, Սփիւռք, Հայ Եկեղեցի, մէկ համընդհանուր ազգ հասկացողութիւնը: Նաեւ հայութեան համաշխարհային դիրքը եւ կշիռը, որոնք մեծ ներուժ կը կազմեն: Միութեան առաջադրանքն է համախումբ ճիգերով այդ կարողութիւնները արդիւնաւորութեամբ օգտագործել ի նպաստ հայ ազգի եւ հայրենիքի զարգացման եւ բարգաւաճումին, որ բնականաբար կը յանգի նաեւ ազգային ինքնութեան ուժեղացումին: Այս առթիւ կազմակերպուած նախաձեռնութիւնները նպատակ ունէին գնահատել իրենց անհատական իրագործումներով հայութեան համաշխարհային վարկը բարձրացնող ահատներ, յատկապէս անոնց օրինակով խանդավառելու եւ գործի մղելու համար երիտասարդ սերունդը: Անոնք նաեւ կը ջնջէին հայրենիք, Արցախ, սփիւռք սահմանագծումները, Մէկ Համընդհանուր Ազգ գաղափարաբանութեամբ:

Հանգրուանային կարեւորութիւն ներկայացնող 89-րդ այս Ընդհանուր Ժողովը նաեւ յատուկ փայլ ստացաւ, անոր զուգահեռ, Հ.Բ.Ը.Մ.ի հիմնադրութեան 110-րդ տարեդարձին առթիւ կազմակերպուած փառաշուք ձեռնարկներով: Ուրբաթ 27 Հոկտեմբերի երեկոյեան «Հոգիս» գեղարուեստական փայլուն համոյթով, Նորքի Հայորդեաց Տան պատանիներու եւ Թումոյի երիտասարդներու մասնակցութեամբ, 70 հոգինոց խումբով մը, Նիւ Եորքի Սիթի Սենթր սրահին մէջ, ղեկավարութեամբ Փաթրիք Մալաքեանի, իսկ Շաբաթ 29 Հոկտեմբերի երեկոյեան կալա շքահանդէսով, Մէնհէթընի կեդրոնը գտնուող «Ճէզ էթ Լինքըլն Սենթըր» գեղատեսիլ դահլիճին մէջ:

Ընդհանուր Ժողովը կայացաւ Նիւ Եորքի «Հարվըրտ Գլապ»ի սրահին մէջ: Նախ քան ատենական ընթացիկ գործընթացը, Նախագահ Պերճ Սեդրակեան իր բացման եւ բարեգալուստի խօսքին մէջ ամփոփեց նախորդ երկու օրերուն տեղի ունեցած հանդիպումներու ընթացքին կատարուած քննարկումներու ոգին եւ հեռանկարային բնոյթը, միութեան ազգային ռազմավարութենէն բխող նպատակային կողմնորոշումներով: Ան մատնանշեց միութեան գործունէութեան ընդարձակուող ծիրը, համընդհանուր կարիքներու հասնելու անհրաժեշտութիւնը եւ համապատասխան նիւթական միջոցներ ապահովելու հրամայականը, կոչ ուղղելով միութեան շրջանակներուն իրենց տեղական համայնքային գործունէութիւններուն մէջ նիւթապէս ինքնաբաւ ըլլալ եւ իրենց ծրագիրները վերամշակել համամիութենական հասկացողութեամբ, նախապատուութիւն տալով ազգային ընդհանրական նպատակներու եւ հայրենիքի զարգացման ուղղուած ծրագիրներու:

Ժողովը ապա վաւերացուց միութեան երկամեայ գործունէութիւններու եւ նիւթական իրավիճակի տեղեկագիրները, որմէ ետք տեղի ունեցաւ Կեդրոնական Վարչական Ժողովի իրենց ժամանակաշրջանը աւարտած անդամներու վերընտրութիւնը եւ նոր անդամներու ընտրութիւնը: Կեդրոնական Վարչութեան միացան երկու նոր անդամներ, յանձինս Տեարք Էրիք Իսրայէլեանի եւ Արմէն Սարգիսեանի:

Կեդրոնական Վարչական Ժողովի նորընտիր անդամներէն Էրիք Իսրայէլեան, փոխ-ղեկավարն է Քալիֆորնիոյ Լոս Անճէլըսի Համալսարանի Տէյվիտ Մքհէֆըն Բժշկագիտական Դպրոցի Մարսողական Հիւանդութեանց մասնագիտութեան բաժնին եւ ատենապետը Լինսի Հիմնարկի ստամոքսային եւ ներքին հիւանդութեանց դարմանական բաժանմունքին: Իսրայէլեան ծանօթ է նաեւ որպէս ֆիլմարտադրիչ եւ համա-ղեկավարը «Survival Pictures» ընկերութեան, որու միջոցաւ իրկանացաւ Հայոց Ցեղասպանութեան անդրադարձող «The Promise» շարժանկարը: Արմէն Սարգիսեան Հիմնադիր Նախագահն է Լոնտոնի Eurasia House International միջազգային կազմակերպութեան, որ խորհրդատուական եւ կազմակերպչական աջակցութիւն կ՛ընձեռէ ճարտարարուեստական, քաղաքական եւ բարձրագոյն կրթութեան զարգացման ծրագիրներու եւ համագործակցական նախաձեռնութիւններու, Լոնտոնի, Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ մէջ: Ան վարած է Հայաստանի Վարչապետի պաշտօնը 1996-1997 եւ հիմնադիրն է Արեւմուտքի մէջ առաջին հայկական դեսպանատան Լոնտոնի մէջ, 1991-ին: Ան մէկէ աւելի անգամներ վարած է Միացեալ Թագաւորութիւններու մէջ Հայաստանի Դեսպանի պաշտօնը:

Ընդհանուր ժողովի երկրորդ նիստին ներկայ գտնուեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՄԱԿ-ի Հայաստանի Լիազօր Դեսպան Զօհրապ Մնացականեան, Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի Դեսպան Գրիգոր Յովհաննիսեան, Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերու առաջնորդներ՝ Խաժակ Արք. Պարսամեան եւ Յովնան Արք. Տէրտէրեան:

Ընդհնաուր Ժողովին ուղղուած իր պատգամին մէջ, նախագահ Պերճ Սեդրակեան ոգեկոչեց Միութեան 110 տարիներու յաղթական իրագործումները եւ պարզեց միացեալ ուժերով իրագործելի զօրեղ ապագայի իր տեսլականը: Ան ըսաւ, թէ այսօր, Հ.Բ.Ը.Մ.ը պատրաստ է կրկին անգամ վստահութեամբ ընդառաջելու համընդհանուր հայ ազգի կարիքնե-

Շար.ը էջ 18

SDHP, PASADENA PARAMAZ CHAPTER



PRESENTS PUBLIC LECTURE

"ISLAMISM & TERRORISM"

FEATURED LECTURER
DR. JOHN AHMARANIAN



Կազմակերպութեամբ՝
ՍԴՀԿ Փասատենա Շրջանի ՓԱՐԱՄԱԶ Մասնաճիւղի

Դասախօսական Երեկոյ
«ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ և ՏԵՌՈՐԻԶՄԸ»

Կը Զեկուցէ
ՏՈՔԹ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՀՄԱՐԱՆԵԱՆ

Ուրբաթ, 18 Նոյեմբեր 2016, երեկոյեան ժամը 8:00-ին
Friday, November 18, 2016 at 8:00 PM

ՀԿԲՄ Կարօ Սողանալեան Սրահէն ներս:
A.E.B.U. Garo Soghanalian Hall
1060 N. Allen Avenue, Pasadena, CA 91104
Մուտքը Ազատ – Հիւրասիրութիւն հանդիսութեան աւարտին

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԸ ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ



Վեր. Յարութիւն Սելիմեան՝ Համայնքապետը Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին, Հինգշաբթի 26 Հոկտեմբեր 2016-ին, հովանաւորութեամբ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ), Բըրէմըսի (Նիւ Ճըրզի) Հայ Երիցական եկեղեցւոյ մէջ «Հալէպ Քաղաքի Փրկութիւնը» խորագիրով հրապարակային դասախօսութիւն մը ներկայացուց:

Բացման խօսքով հանդէս եկաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Գործադիր Տնօրէն Զաւէն Խանճեան որ անդրադառնալով Հալէպի ներկայ վիճակին ըսաւ. «Հիմա որ գիտենք "Ո՞ւր է Հալէպը" եւ "Ի՞նչ է Հալէպը", թերեւս ժամանակն է հարցնելու թէ "Ի՞նչպէս է Հալէպը, իր արեւելքով եւ յատկապէս արեւմուտքով"։ Ան յիշեց նաեւ ԱՀԱԸ-ի շարունակական նիւթական օժանդակութիւնը Հալէպի Հայութեան եւ աւելցուց թէ հալէպահայեր որոնք հարկը կը զգան ապահովութիւն փնտռելով հեռանալ Հալէպէն, ԱՀԱԸ-ը յատուկ ծրագրով մը պատրաստ է հոգալու անոնց փոխադրութեան բոլոր ծախսերը դէպի Հայրենիք: Ապա ան բարձր գնահատեց Վեր. Սելիմեանի հսկայ եւ ծաւալուն աշխատանքը եւ նուիրուածութիւնը Սուրիահայ ժողովուրդին:

Պրն. Խանճեանի բացման խօսքին յաջորդեց սահիկներու ցուցադրութիւն մը: Առաջինը մասը կը ներկայացնէր "Նախապէս եւ ապա" պատկերներ հաստատութիւններու, եկեղեցիներու եւ դպրոցներու Հալէպի, Քեսապի եւ Տէր Զօրի մէջ, զոր ցոյց կու տար անոնց ահաւոր կործանումը: Երկրորդ մասը կը ներկայացնէր Հալէպահայ համայնքին եռանդուն կեանքն ու գործունէութիւնը եկեղեցիներէն եւ դպրոցներէն ներս, ինչպէս նաեւ կարիքաւորներու ամէն տեսակի նպաստի բաշխումը:

Ապա վերապատուելի Սելիմեան բեմ բարձրացաւ ներկայացնելու «Հալէպ Քաղաքի Փրկութիւնը» խորագիրը կրող նիւթը: Վերապատուելին իր խօսքին ընդմէջէն նշեց, թէ Հալէպը քաոսային վիճակ մը կ'ապրի այսօր եւ համարեա՛ բոլոր շրջաններու իրավիճակը դարձած է ահաւոր: Ան յիշեց, թէ վերջին օրերու ճգնաժամին մէջ Սուրիոյ ժողովուրդը իր բոլոր խաւերով, ցեղային, կրօնական, մշակութային պատկանելիութիւններով վնասներ կրեց եւ զոհեր տուաւ, եւ Հայ համայնքը անմասն չմնաց այս դժոխային իրավիճակէն եւ թիրախ դարձաւ ահաբեկչութեան՝ տասնեակ Հայ զոհեր տալով, որոնց կողքին վիրաւորներ: Վերապատուելին մատնանշեց, թէ Սուրիոյ տագնապին մէջ վնաս կրող առաջին եւ վերջին կողմը ժողովուրդն է: Ան անդրադարձաւ տնտեսական տագնապին ու բազում մարտահրաւէրներուն, զոր կը դիմագրաւէ Սուրիացի իւրաքանչիւր քաղաքացի:

Վերապատուելին յուզմունքով անդրադարձաւ 2014 տարեշրջանին Քեսապի ենթարկուած ահաբեկչական յարձակումներուն եւ բնակչութեան տեղահանման, ապա ներկայ իրավիճակին մասին յաւելեալ տեղեկութիւններ ներկայացուց:

Իր խօսքի աւարտին ան շեշտեց իւրաքանչիւր անհատի կարեւոր դերը խաղաղութեան հաստատման գծով, որպէսզի կարենանք մեր կեանքը շարունակել աւելի բարօր ու խաղաղ վիճակի մէջ ու ըսաւ. «Հալէպը 1915 թուականի Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած Հայութեան համար եղաւ ապաստան ու վերականգնումի ամրոց: Հալէպը այն քաղաքն է, ուր մեր նախահայրերը եւ որբուկները թշուառ օրերուն ոտքի կանգնեցան. մեր ժողովուրդը յաղթահարելով բոլոր մարտահրաւէրները յարութիւն առաւ եւ տեղւոյն բնակչութեան հետ ստեղծեց համակեցութեան գեղեցիկ խճանկար մը, որուն կեդրոնը եկեղեցին էր: Այնտեղ ուր եկեղեցի մը գոյութիւն ունէր, կար նաեւ դպրոց մը եւ մշակութային կեդրոն մը: Հալէպահայութիւնը ցոյց տուաւ ամբողջ աշխարհին, որ Հայոց Ցեղասպանութիւնը վերջ մը չէր: 1915 թուականէն ետք կար ճշմարիտ եւ իսկական յարութիւն մը Հայ ժողովուրդին համար: Տարիներու ընթացքին մեր նախահայրերը հաւատարիմ քաղաքացիները դարձան Սուրիական նոր Հայրենիքին: Անոնք հաւատարիմ մնալով իրենց Հայկական արմատներուն ու նախահայրերուն կերտեցին երկրորդ հայրենիք ու հակառակ բոլոր դժուարութիւններուն գոյատեւեցին: Ուստի, կը հաւատամ, որ մեր սիրելի Սուրիան մեր՝ Սուրիահայերուս կարիքը ունի, որովհետեւ մենք մեծ դեր ունինք Սուրիոյ վերակառուցման գործընթացին մէջ: Մենք, մեր ժողովուրդին հետ մէկտեղ, յոյսով պիտի սպասենք այն մեծ օրուան, երբ խաղաղութիւնը պիտի տիրէ եւ վերադառնայ մեր սիրելի երկրին եւ մեր համբերութեան փորձութիւնը ապրած ըլլալով, պիտի ճաշակենք Աստուծոյ շնորհքն ու ողորմութիւնը:

Վեր. Յ. Սելիմեան իր խօսքը

Շար.ը էջ 19

## ՅԱՐՈՒԹ ՍԷՆԷՔԷՐԻՄԵԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԵԼՈՅԹԸ



Յարութ Սէնէքէրիմեանի դաշնամուրի ելոյթը (piano concert) տեղի պիտի ունենայ Կիրակի, 20 Նոյեմբեր 2016-ին, կէսօրէ ետք ժամը 4:00-ին, Կլէնտէյլի Երիցական (Presbyterian) եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյ հասցէն է, 125 S. Louise Street, Glendale, California 91205:

Յարութ դաշնամուր նուագել սկսած է չորս տարեկանին, հօրը քաջալերանքով: Իր առաջին ուսուցիչը եղած է յայտնի դաշնակահար Վաչէ Մանկրեանը, իսկ ինը տարեկանին՝ սկսած է յաճախել հռչակաւոր Լոս Անճելըսի Colburn School of Performing Arts-ը:

Երկրորդական վարժարանը աւարտելէ ետք, Յարութ ընդունուած է Օհայոյի Oberlin Conservatory of Music-ի կողմէ եւ շարունակած իր ուսումը, մասնագիտանալով դաշնամուրի մէջ: Հուսկ ապա, Յարութ սկսած է յաճախել Նիւ Եորքի Manhattan School of Music-ը, ստանալու համար Մաքիստրոս Արուեստից Տիտղոս:

Յարութ մասնակցած է շատ մը դաշնամուրի մրցոյթներու՝ Նիւ Եորքի, Սան Ֆրանսիսքոյի եւ Թէքսասի մէջ: Ան՝ անհատական եւ խմբային ելոյթներով հանդէս եկած է Լոս Անճելըսի, Նիւ Եորքի եւ Օհայոյի բեմերուն վրայ: Իսկ 2015-ի Յունիս ամսուն, ան բախտաւորութիւնը ունեցած է երթալ Երեւան եւ երկու անգամ ելոյթ ունենալ Արամ Խաչատուրեանի Տուն Թանգարանի սրահին մէջ:

Նոյեմբեր 20-ելոյթի տոմսերու գիներն են 50 եւ 25 տոլար, իսկ տոմսերը կը ծախուին Ապրիլ Գրատուն, համացանցի վրայ ItsMtSeat.com/Harout եւ կամ հեռաձայնելով (818) 794-0703 թիւին:

Պէտք է քաջալերենք այս երիտասարդ հայ տաղանդաւոր դաշնակահար Յարութը:

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Նախկին պաշտօնակից ծանօթ լրագրող եւ երբեմնի «Նոր Կեանք» շաբաթաթերթի սեփականատէր Տիար Գրիգոր Շէնեան, բարձր գնահատելով մեր պաշտօնաթերթի բովանդակութիւնն ու գաղափարական ինքնուրոյն ուղեգիծը՝ 1000 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

«Մասիս»ի խմբագրութիւնն ու աշխատակազմը շնորհակալութիւն կը յայտնեն վաստակաշատ հրապարակագիրին:



# Massis Weekly

Volume 36, No. 43 | Saturday, November 19, 2016

## Ambassador Richard Mills "The U.S. Will Remain a Steadfast Partner and Friend to Armenia"



YEREVAN -- On the morning of November 9, a diverse group of government officials, politicians, civil society representatives, students, educators, and members of the press joined U.S. Ambassador to Armenia Richard Mills, Jr. for an Election Watch Party at the U.S. Embassy. As the results of the U.S. presidential and congressional elections were broadcast live from the United States, both American staff and our Armenian guests experienced the excitement of the democratic process in action as polls closed and votes were tabulated across the U.S.

More than 800 invited guests had the opportunity to interact with American diplomats and discuss the elections as real-time results were reported by various U.S. TV channels. In addition to the live coverage, the Embassy provided a range of informational materials about the U.S. elections and the U.S democratic process.

In his remarks to the assembled audience, Ambassador Richard M. Mills, Jr. emphasized that "today is a special day, one that comes along every four years, when the United States reaffirms and celebrates its democratic tradition, 240 years strong, of calling upon the people to elect their next president. As passionate and intense as this year's election campaign has been, Americans know that as a result of yesterday's vote, executive power will be transferred peacefully on January

Continued on page 3

## European Commission: Turkey Actively Supported Azerbaijan During April Clashes in Karabakh

BRUSSELS -- "Turkey was vocal in its support for Azerbaijan during clashes in April 2016 in Nagorno-Karabakh," the European Commission said in a report on Turkey, published on November 9. The 100-page review claimed Turkey had regressed in its eligibility to join the bloc.

The Commission Staff Working Document highlighted a series of problem areas, including the legal situation in Turkey, which it described as being of "grave concern".

It warned that a range of measures, introduced by president Recep Tayipp Erdogan following the failed military coup on July 2015 were "not in line with European standards".

The report slammed Ankara and highlighted "serious allegations of human rights violations" as well as "disproportional use of force" by the security services.

The authors note that "the adoption in May of a law allowing the immunity of a large number of deputies to be lifted and the ensuing detentions and arrests of several HDP Members of Parliament, including the two Co-Chairs, in November is a matter of grave concern."

The report added that "the Armenian Patriarchate's proposal to open a university department for Armenian language and clergy has been pending for several years. Similar demands have been made by different Christian communities who sought to train clergy.

The report also reminded that the 2009 protocols on normalization of relations with Armenia are not yet ratified.

## World Cup Qualifiers: Armenia Stage Dramatic Comeback Victory Against Montenegro



YEREVAN -- Armenia staged a dramatic comeback to earn their first victory in World Cup 2018 qualifying.

Trailing 2-0 against Montenegro at half-time, Armenia fought back and scored a sensational winner in the 94th minute.

Having not won any of their last 12 competitive matches, since October 2013, Armenia looked set for another defeat as goals from Damir Kojasevic and former Manchester City forward Stevan Jovetic gave Montenegro a commanding lead.

With Armenia stuck at the bottom of Group E with no points from their opening three matches, the match looked beyond Artur Petrosyan's side.

However, captained by Manchester United midfielder Mkhitaryan, Armenia pulled a goal back five minutes after the restart as Artak Grigoryan struck following a lung-busting run from the halfway line after goalkeeper Mladen Bozovic had saved his initial shot.

Armenia then equalized with 16 minutes to go, Varazdat Haroyan netting his first international goal, finding himself in acres of space to slot the ball home from a corner.

The spirited comeback was completed deep into injury time as Gevorg Ghazaryan struck a fierce drive into the bottom corner to spark wild scenes.

Victory saw Armenia move above Kazhakstan into fifth four points behind Montenegro who remain top with seven points.

## Nicolas Sarkozy Denialism is Not Opinion, it is Crime



PARIS -- Former French President Nicolas Sarkozy has met in Paris with the representatives of the Armenian community. Nouvelles d'Armenie reports.

Co-chairman of the Coordination Council of Armenian Organizations in France Ara Toranian presented the issues of concern for the Armenian community. He particularly referred to Nagorno Karabakh issue, stating that the security of the latter is of key importance not only for Armenia, but for the entire European civilization. Toranian also emphasized the negative position of the Armenian community on the issue of Turkey's accession to the EU.

In a sincere conversation a reference was also made to the individuals with close ties with the Azerbaijani dictatorship within Sarkozy's circle. Sarkozy stated that when taking political decisions, he is the leader, but not the representatives of his circle, stating that he supported the criminalization of the denial of the Armenian Genocide during his presidency. He also affirmed that he is against Turkey's accession to the EU, contrary to current President Hollande's position.

Referring to the issue of genocides, Sarkozy stated that there have been 4 genocides – Armenian Genocide, the Holocaust, the genocide of Cambodians and the Tutsi genocide. He also stated that the struggle of Armenians against genocides raises universal issues. According to him, denialism is not an expression of opinion, but it is a crime.

# Deputy FM Kocharyan: Baku Keeps Torpedoing Agreements Reached at Vienna and St. Petersburg Summits



YEREVAN -- Armenian Deputy FM Shavarsh Kocharyan told reporters on Thursday that Baku keeps torpedoing the agreements reached at Vienna and St. Petersburg summits in response to large-scale military exercises in Azerbaijan.

"The problem is that, following the Vienna meeting, Azerbaijan was supposed to provide relevant information to all OSCE participating states 42 days in advance of the start of military activities, if the activity involves at least 9,000 troops. But it did not do so, which is evidence Baku continues torpedoing the agreements reached at the Vienna and Saint Petersburg summits," he said.

Asked about the possible aggravation of the situation at the line of contact, Mr. Kocharyan said "We have to be always ready for any step on the part of the rival." "It's an axiom for all of us, especially after the April events," he added.

# Armenia and NATO Discuss Fate of Armenians in Aleppo

YEREVAN (Combined Sources) -- The 10th NATO Week kicked off today in Armenia at the organization's Information Center in Yerevan, which also celebrates the 10th anniversary of its foundation.

Gagik Hovhannisyan, Head of Armenian MFA Arms Control and International Security Department, Mher Israyelyan, Deputy Chief of Department of Defense Policy of Armenian Ministry of Defense, William Lahue, Head of the NATO Liaison Office to South Caucasus, and Matthias Kiesler, German Ambassador to Armenia spoke about NATO-Armenia relations at the Center today.

"NATO and Armenia have a very reliable, steady and substantial partnership," James Appathurai NATO Secretary General's Special Representative for the Caucasus and Central Asia, said in a video message on the occasion of the NATO Week in Armenia.

According to him, the most obvious element of that long-standing cooperation is Armenia's contribution to NATO peacekeeping operations in Afghanistan and Kosovo.

He pointed to other non-military fields of cooperation, such as defense education, fight against corruption, science for peace programs. "It's a very good two-way, mutual relationship, which benefits both parties," he said.

"Armenia has a balanced foreign policy," he said, adding that Armenia-NATO cooperation is in no way detrimental to Armenia's other bilateral or multilateral relationships," James Appathurai said.

William Lahue said that Armenia-NATO partnership is founded on strong bases, as it is mutually beneficial.

He informed that apart from other issues, Syrian crisis was discussed last week with Armenian delegation, which visited NATO Headquarters.

"We know that Armenia has hosted more than 20,000 refugees from Syria. We also know that a big number of Armenians live in Syria now, in particular in Aleppo, and Armenia is concerned about their future," U.S. official said.

Matthias Kiesler noted that NATO Week is a very important event, "as it gives the opportunity to introduce NATO-Armenia excellent cooperation to Armenian public, as not everyone is aware of it."

Gagik Hovhannisyan and Mher Israyelyan introduced the history of Armenia-NATO cooperation and ongoing projects, emphasizing that Armenian side is ready to develop collaboration with the Alliance both in military and public sectors.

The NATO Week that kicked off in Yerevan today will continue through November 18 and will be accompanied by a number of events. It's aimed at raising awareness about Armenia-NATO relations among the society.

German Ambassador to Armenia Matthias Kiesler considers that NATO Week is yet another opportunity to discuss important issues of bilateral interest.

# Opposition Gunman Charged with Murder Over Yerevan Police Station Attack

YEREVAN (RFE/RL) — One of the opposition gunmen who seized a police station in Yerevan in July has been charged with killing a police officer during their two-week standoff with Armenian security forces, it emerged on Tuesday.

Smbat Barseghian is the first member of the armed group to face a murder charge in the ongoing criminal investigation into the attack. He and 43 other individuals kept under arrest have until now been accused of only seizing state buildings, taking hostages or illegally acquiring weapons.

The gunmen seized the police

Continued on page 4

# Azerbaijani Official Destroys Colombian Flag Taking it for Armenian



BAKU -- Azerbaijanis are still unable to differentiate between the national flags of Armenia and Colombia. In another undisputable example of xenophobia, chief executive of Dashkesan district Ahad Abiyev destroyed the flag of Colombia taking it for Armenian, displaying the explicit hatred against Armenians.

The event was devoted to Azerbaijani National Flag Day and took place on November 9. This incident could have far-reaching political consequences between Azerbaijan and Colombia.

Trying to alleviate the stir rising from the scene, Abiyev started to justify himself by claiming that he thought it was the Armenian flag displayed upside-down. "Those who present the Armenian flag as the Colombian flag work for Armenians", Abiyev announced.

shakira_flagIn 2012 international singer Shakira caused a shock at a soccer tournament in Azerbaijan as she mistakenly held up a Colombian flag upside down giving the impression it was the flag from Armenia.

The Colombian singer took to the stage before the FIFA Under 17 Women's World Cup Final. She was dressed all in black and displaying what she thought was her native Colombian flag. However the flag, turned backwards, represents Armenia due to it having the same colors – red, yellow and blue – as Colombia.

# Armenia, UAE Keen on Developing Economic Cooperation



ABU DHABI -- On a visit to the United Arab Emirates, Armenian President Serzh Sarkisian had a meeting with Mohammed bin Zayed bin Sultan Al-Nahyan, the Crown Prince of Abu Dhabi and Deputy Supreme Commander of the UAE Armed Forces.

Noting that Armenia is interested in intensifying the political dialogue and developing comprehensive cooperation with the United Arab Emirates, President Sarkisian voiced hope that agreements reached during the visit will contribute to the further development of ties.

Serzh Sarkisian hailed the fact that the relations between Armenia and UAE have entered a new, more practical stage of development, over 20 agreements on cooperation in different spheres have been signed between the two countries, more documents are expected to be signed within the framework of the visit.

The interlocutors agreed that the interstate relations between Armenia and UAE are successfully developing on the basis of the centuries-old friendship between the Armenian and Arab people.

President Sarkisian and Crown Prince Mohammed bin Zayed bin Sultan Al-Nahyan emphasized the importance of the activity of the Intergovernmental Commission in promoting the current pace of trade-economic cooperation.

The parties agreed to intensify the work towards attracting more UAE investments in the Armenian economy and find effective mechanisms to implement the investment projects.

The interlocutors referred to a number of issues on bilateral agenda, the urgent international issue, the crisis in the Middle East, the problems and challenges existing in the South Caucasus, the process of settlement of the Karabakh conflict.

## Relic-Chests of Armenian Kings Opened in Aghdzk Village Mausoleum



YEREVAN -- Three relic-chests have been discovered during the excavations of the mausoleum of Armenian Arsacid kings in Aghdzk village. Two of them have already been opened revealing the relics of the members of the Armenian dynasty. The third one was supposed to be empty, however the professional "instincts" of archaeologist, head of the Aghdzk expedition Hakob Simonyan, did not let him down. The relic-chest was full of human remains and relics.

The chest remained open only for a few minutes as the chemical composition of the relics are to be examined in the coming future, DNA analysis is to be conducted to reveal the genetic construction of the dynasty.

In the words of the head of the expedition this chest, like the previous two ones, contain the bones of the men, women and children of the Armenian dynasty.

Archaeological excavations in the Aghdzk village mausoleum have been carried out in several stages. They launched in 1974 up to 2001 and the last phase kicked off in 2014. Minister of Culture Armen Amiryan told the reporters that 15 million AMD was allocated from the state budget to carry out excavations in the monument, in 2016 17 million AMD has been allocated. An equal amount of money is planned to be allocated in 2017 as well.

"The activities show that we should proceed the excavations, the necessary funds are just to be allocated for us to be able to establish infrastructures in addition to the excavations and studies," the minister noted.



Notably the opening of the relic-chest has been attended by National Assembly Speaker Galust Sahakyan, MPs, the residents of Aghdzk and its neighboring villages.

"The Persians believed that the bones of the Armenian kings bore an enormous power which protected the Armenian kingdom. Thus King Shapur of Persia exhumed the bones of the Armenian kings and attempted to take them to Persia allegedly taking Armenia's power. However, Sparapet Vasak Mamikonyan defeated the Persians and reclaimed the bones of the Arshaluni monarchs, he buried them at Aghdzk.

We all believe that the remains of the saints kept in Vatican have magical power. This means the people of the 21th century believe in it. We believe that the bones of our Armenian kings possess a great power. We have discovered that bones and we are sure that the rebirth of Armenia is close. We will see Armenia as powerful as under Arsacid kings," head of the expedition H. Simonyan noted.

## Ambassador Richard Mills

**Continued from page 1**

20, 2017 in accordance with the U.S. Constitution and rule of law. As Secretary Kerry said just last week, 'we're now engaged in the 58th free and open presidential selection process for the 58th consecutive time. Compared to a lot of places in the world, that's pretty amazing'."

Ambassador Mills reaffirmed to the gathered Armenian guests that the excellent partnership between the U.S. and Armenia will stay strong regardless of who is elected the next president of the United States. "The U.S. remains committed to our shared goal of an independent and prosperous Armenia at peace with its neighbors, and regardless of who the next president is, the U.S. government and the U.S. Embassy will remain steadfast partners and friends to Armenia, as we work together to ensure the democratic and prosperous future that the Armenian people deserve.



## Armenia Fund, Glendale Adventist Medical Center 2nd Successful Mission to Armenia



LOS ANGELES – Glendale Adventist Medical Center (GAMC) and Armenia Fund, held a joint medical mission providing free medical services and advanced surgeries, from October 13-20, 2016 in Noyemberyan, Armenia's most remote borderline city, 2km from the border with Azerbaijan and Georgia.

The medical mission was a result of joint, careful planning between the two organizations since March 2016. Led by the hospital's President/CEO Kevin Roberts, the medical mission team consisted of 42 doctors, surgeons, nurses, and healthcare professionals from the United States.

In order to ensure optimal operational efficiency, an advance team of medical professionals from GAMC arrived at the Noyemberyan Hospital prior to the start of the medical mission to help prepare the medical and surgical equipment, supplies, and pharmaceuticals that were donated to the Noyemberyan Hospital within the framework of the project. Armenia Fund transported 2.5 tons of supplies, months in advance and oversaw its clearance to Armenia.

Building upon last year's successful mission, GAMC tripled the surgical service line of the mission to include ophthalmological, gynecological, orthopedic surgeries, in addition to the general and oral/maxillofacial surgeries. After 5 days of back to back operations, the total number of surgeries reached 110 – an unprecedented record even in Armenia's history.

The mission significantly expanded service lines for women's health, most importantly screenings for cervical cancer, a leading and growing cause of death in Armenia, especially amongst the rural population. The mission was able to perform these screenings by collecting pap smears and having them analyzed and read by the team pathologist from the United States. Physicians would later interpret the results to Noyemberyan patients and provide further care.

"The difference between last year and this year was phenomenal. We learned so much and applied those lessons for about a three-fold result! The people of Noyemberyan are so appreciative of these missionaries and our missionaries appreciate them! There is no greater joy in life than using your God-given talents to bless others, without expecting anything in return. It is pure joy and at the same time thoroughly exhausting. We can't wait to do it again next year!" stated Kevin Roberts, CEO/President of Glendale Adventist Medical Center.

The clinic saw more than 1700 patients during the week-long medical mission. Specialists from GAMC thoroughly screened patients and provided free, high quality medicines to treat various illnesses and conditions. 220 orthopedic interventions were performed during the mission.

"Armenia Fund draws a long history of touching peoples' lives in so many ways. Our partnership with the Glendale Adventist Medical Center has taken this to another level – by making it more personal and directly impacting the quality of peoples' lives. Thanks to this continuous program and teaming up with the best healthcare professionals in the U.S., we expect to reach new heights every year – all with the purpose of serving the people who live in the most rural and challenging areas of Armenia," stated Maria Mehranian, President of Armenia Fund U.S. Western Region.

Following the completion of the mission, the GAMC team was received by Prime Minister Karen Karapetyan and Health Minister Levon Altunyan at the prime minister's office. Both expressed high praise for the work of the medical professionals, as well as the leadership of GAMC and Armenia Fund. In his remarks, the prime minister also emphasized the importance of the mission "as an endeavor that fosters a new culture of professionalism in Armenia."

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

## The Memoir of Naim Bey and Talat Pasha Telegrams" a Lecture by Dr. Taner Akçam



MISSION HILLS -- Prof. Taner Akçam of Clark University will give a lecture entitled "The Memoir of Naim Bey and Talat Pasha Telegrams: Are They 'Armenian Forgeries'?" on Sunday, November 20, 2016, at 4:00 p.m., at the Ararat-Eskijian Museum, Sheen Chapel, 15105 Mission Hills Road, Mission Hills, CA. The program is sponsored by the Ararat-Eskijian Museum, the Armenian Bar Association, the Organization of Istanbul Armenians, and the National Association for Armenian Studies and Research (NAASR).

In 1920-21, author and editor Aram Andonian published a book known in Eng-lish as The Memoirs of Naim Bey and in Armenian as Medz Vojir? (The Great Crime). It contained the writings of an Ottoman official and telegrams from Talat Pasha containing orders for the killing of Armenians.

In 1983, Turkish authors Sinasi Orel and Sureyya Yuca published a book to es-tablish that the memoir was fake and the telegrams were forgeries. The argument had three main pillars: 1) there was no such person as Naim Bey; 2) there is no actual mem-oir, since a non-existing person cannot write a memoir; and 3) the so-called Talat Pasha telegrams, like the alleged memoir, were invented by Andonian.

Although noted researcher Fr. Krikor Guerguerian (Kriger) in 1965 published a detailed examination of Andonian's published and unpublished materials and Vahakn N. Dadrian in 1986 published a lengthy response to Orel and Yuca, in general the scholarly world ceased using the memoir and telegrams as trustworthy sources. Until now, the claims against Andonian have remained unanswered and became the corner-stone of denialism.

Taner Akçam risked venturing into this highly disputed territory and pursued the matter to its necessary conclusion, seeking out the archival sources and documents needed for a proper scholarly assessment. The first results of his research will be presented in this lecture and in a book to be published in Turkish later this fall. The ques-tion must be asked: Is it time to remove one of the last bricks in the denialist wall and watch the façade crumble?

Taner Akçam is the author of From Empire To Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide and A Shameful Act: the Armenian Genocide and Turkish Responsibility, and The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire as well as other works in the English and Turkish Languages. Since 2008 he has been the Robert Aram and Marianne Kaloosdian and Stephen and Marian Mugar Professor of Armenian Genocide Studies at Clark University in Worces-ter, MA.

For more information about this program, contact Ararat-Eskijian Museum at (747) 500-7585 or Ararat-eskijian-museum@netzero.net, or NAASR at (617) 489-1610 or hq@naasr.org.

## Opposition Gunman Charged with Murder

**Continued from page 2**

compound in Yerevan's southern Erebuni district on July 17 to demand President Serzh Sarkisian's resignation and the release of Zhirayr Sefilian, the jailed leader of their Founding Parliament radical opposition group.

One of the police officers shot in the attack, Colonel Artur Vanoyan, died on the spot. Another officer, Gagik Mkrtchian, succumbed to his chest and abdomen wounds on August 13.

The third police casualty, Yuri Tepanosian, was killed on July 30, the day before the 20 remaining gunmen holed up in the Erebuni compound surrendered to the Armenian authorities. The police said the 30-year-old Tepanosian was shot by one of the gunmen as he sat in a police car parked about 400 meters from the besieged compound.

Armenia's Office of the Prosecutor-General told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) on Tuesday that Barseghian stands accused of murdering Tepanosian.

Barseghian's lawyer, Hayk Alumian, said his client denies the murder charge but declined to comment further. "I can only say that Smbat Barseghian does not consider himself guilty," said Alumian.

During the Erebuni standoff, the gunmen's leader, Varuzhan Avetisian, insisted that Tepanosian was not gunned down by his armed group. Avetisian said the officer's car was not even visible from the compound.

The police responded by releasing photographs meant to disprove Avetisian's claims. They also circulated a short video purportedly showing a man with a sniper rifle taking a position on the roof of a police building inside the compound.

The Special Investigative Service (SIS), which is leading a criminal inquiry into the attack, said on October 25 that it has identified all individuals who killed the three police officers. Only Barseghian appears to have been formally charged with murder so far.

The SIS also said that a total of 62 people, including the 31 gunmen, have been charged in connection with the Erebuni attack. Forty-four of them are kept in pre-trial detention, while two others remain on the run, according to the law-enforcement agency.

## Aleppo Today and Tomorrow



PARAMUS, NJ -- Benefiting from Rev. Haroutune Selimian' s visit to Paramus, NJ, the Armenian Missionary Association of America (AMAA) organized an event on October 26, 2016 at the Armenian Presbyterian Church in Paramus, NJ to hear updates on Aleppo.

Rev. Selimian is the President of the Armenian Evangelical Community in Syria and Pastor of the Armenian Evangelical Bethel Church in Aleppo. During the five-year war, which continues to be in escalation mode, Rev. Selimian has been with his flock suffering together the hardship and supporting them morally and spiritually every day.

Rev. Berj Gulleyan, Pastor of the Armenian Presbyterian Church, opened the evening with a prayer.

In his opening remarks, Zaven Khanjian, Executive Director/CEO of the AMAA, noted that the Western mainstream media recently hyped the reporting of the agony of the 250,000 Syrians living in Aleppo's East side under the control of extremists. The media however ignored the five-year plight of the 1,250,000 people under government control who suffer from the daily barrages of rockets and mortars with no running water and no power.

Mr. Khanjian noted "now that we know 'Where is Aleppo' and 'What is Aleppo' it may be time to ask the question 'How is Aleppo, all of Aleppo?'" He mentioned the continuous financial help that the AMAA has been extending to the Armenian community in Aleppo since the economic machine stopped because of the conflict.

He added that for those Syrian Armenians who are willing and unable, the AMAA has introduced the 'Syria Lifeline' program which manages their move and covers all transportation costs to the Homeland. Mr. Khanjian commended Rev. Selimian's courage and sacrifice daily risking his life shepherding the flock in the divided war torn city.

A video followed the presentation. The first part depicted 'before and after' pictures of institutions, structures, buildings, Armenian churches and schools in Aleppo, Kessab and Der Zor which show the horrible destruction. This part of the video also showed pictures of many Armenian victims of the war.

The second part was an illustration of the fervent life of the faithful at Sunday Church services, Sunday schools, children's choir, youth groups and ladies' guild activities as well as Kindergarten, Elementary and Secondary students in classrooms and at leisure. The video concluded with pictures of social services; food and water distribution, household essentials, cooking gas, clothing and shoes, monetary subsidies to families in need, Christmas and Easter packages, pajamas and toys to children and the Bethel Polytechnic, family visitations by the pastor, visitation to the Armenian old aged home, the orphanage, etc.

Rev. Selimian then spoke and reminded the guests that this is not the first time that the Armenian nation has endured a catastrophe like this. He said these experiences make people stronger in their faith and get closer to each other.

He stated that without the help of the AMAA, none of the good shown in the video would happen. Because of the AMAA aid, institutional structural damage is immediately repaired, teachers are paid their full salary and bonuses to cover currency devaluation and the children's' tuition is paid.

Rev. Selimian elaborated on all the programs that were shown in the video. He stated that Christians believe that all people are created with the image of God. With this conviction some help is also distributed to local neighbors who suffer under the circumstances. He said ministers extend a shoulder for people to cry on, visit families of victims and perform funeral after funeral. Rev. Selimian expressed confidence that someday we shall see the Armenian churches rebuilt with the return of peace as there is always the hope of sunrise after darkness.

Mr. Khanjian ended the evening stressing that the vibrant and peaceful oasis amidst the desert of death and destruction in Aleppo is only achieved through the grace of God. He appealed to the audience to continue their steadfast support of the Armenian community in Aleppo. He said, "It is our spiritual, national and humanitarian duty to do so."

Following Rev. Gulleyan's closing prayer a reception followed.

The AMAA is thankful to all those who responded to Mr. Khanjian's call for support; $12,000 was raised for needy Syrian Armenian families. A special thank you to George Khorozian, who donated $10,000 which was raised in honor of his 70th birthday.

## ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆՈՒՄ ԲԱՑՈՒԵԼ Է ՀԱՅՈՑ ԱՐՔԱՆԵՐԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՆՏՈՒԿԸ



*Արագածոտնի մարզի Աղձք գիւղում գտնուող Արշակունեաց թագաւորների դամբարանում այսօր բացուեց հայոց արքաների մասունքներն ամփոփող երրորդ սնտուկը: Այս մասին յայտնում է Հայաստանի մշակոյթի նախարարութիւնը:*

*Դամբարանի պեղումների ժամանակ յայտնաբերուել է երեք սնդուկ՝ մասունքներով: Ազգային ժողովի պատգամաւոր Արագած Ախոյեանի առաջարկով երրորդ սնտուկի բացման արարողութեանը ներկայ էին նաեւ բարձրաստիճան պաշտօնեաներ:*

*«Ձեր աչքի առաջ այսօր բացուեց այն, ինչ գմռսուել, պահպանուել ու մեզ է փոխանցուել 1650 տարի առաջ: Սրանք արքայատոհմի անդամների ոսկորներ են, ինչը նշանակում է, որ մեր պատմիչների՝ Խորենացու եւ Բուզանդի վկայութիւնները մարմին առան ու դարձան իրականութիւն հենց մեր աչքի առաջ:*

*Ըստ Փաւստոս Բիւզանդի, 364 թ. հայ-պարսկական պատերազմի ժամանակ՝ պետականութեան գաղափարն ազգային գիտակցութիւնից արմատախիլ անելու նպատակով, պարսից զօրքը քանդում է Արշակունի թագաւորների գերեզմանները եւ որոշում նրանց ոսկրերը տեղափոխել Պարսկաստան: Սակայն սպարապետ Վասակ Մամիկոնեանի գլխաւորութեամբ հայոց զօրքն Արարատեան դաշտում պարտութեան է մատնում պարսիկներին եւ հայ թագաւորների ոսկորները վերաթաղում Աղձք բնակավայրում: Արշակունեաց թագաւորների դամբարանը կառուցուել է 364 թուականին»,-ասաց հնագիտական արշաւախմբի ղեկավար Յակոբ Սիմոնեանը:*

*Մշակոյթի նախարար Արմէն Ամիրեանը լրագրողների հետ ճեպազրոյցում նշեց, որ Աղձքի հնագիտական ծրագրի իրականացման համար 2014 թուականին տրամադրուել է 15 միլիոն դրամ, 2015-ին 2016-ին՝ 17 ական միլիոն, 2017-ի համար նոյնպէս նախատեսուած է 17 միլիոն դրամ:*

*«Սա սկիզբն է այն մեծ շարունակութեան, որը՝ այս ամէնը տեսնելով, կարող եք ենթադրել, թէ ինչի կարող է վերածուել: Պարզապէս պէտք է լինեն համապատասխան յատկացումներ, դրամական միջոցներ, որպէսզի կարողանանք ոչ միայն թանգարանացման, պեղման ու ուսումնասիրման աշխատանքներն իրականացնել, այլեւ լուծել ենթակառուցուածքների խնդիրը, ինչը կը նպաստի զբօսաշրջութեան զարգացմանը«:*

## «ԱՐԱՐԱՏ ՖՈՒՃԻՅԱՄԱ» ՀԱՄԵՐԳ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՋ

*Նոյեմբերի 9ին Վիեննայի «Հայաստան» կեդրոնին մէջ, կազմակերպուած էր համերգ մը՝ Արարատէն Ֆուճիյամա» խորագրով* (From Ararad sar to Fujison)*: Ճափոնահայ ջութակահար Կարէն Իսրայէլեանի գլխաւորութեամբ նուագախումբը վիեննացիներուն ներկայացուց եւրոպական եւ հայկական ժողովրդական ու դասական երաժշտութեան սեփական մշակումները՝ ճափոնական աւանդական նուագարաններու ուղեկցութեամբ:*

*Սոյն համերգին բացման խօսքով հանդէս եկաւ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեանը: Ան անդրադարձաւ հայ-ճափոնական յարաբերութիւններու պատմական կապերուն: Մասնաւորաբար խօսեցաւ 2013էն ի վեր, Երեւանի եւ Թոքիոյի մէջ յաջողութեամբ տեղի ունեցած համերգներու մասին: Այնուհետեւ ներկաներն ունկնդրեցին Պախի, Կոմիտասի, Արամ Խաչատուրեանի եւ ճափոնցի կոմպոզիտորներու ստեղծագործութեանց կատարումները:*




## ԱՐՄԷՆ ԵՆԳՈՅԵԱՆԻ «ԱՌԱՋՆԱԳԾՈՒՄ» ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ



*Շուշիի արուեստի կեդրոնում բացուել է Արմէն Ենգոյեանի հեղինակած «Առաջնագծում» լուսանկարչական ցուցահանդէսը՝ նուիրուած ՀՀ Անկախութեան հռչակման 25-րդ տարեդարձին: Ձեռնարկը կեանքի է կոչուել «Թէքէյեան Կեդրոն» հիմնադրամի եւ «Շուշիի թանգարաններ» ՊՈԱԿ-ի աջակցութեամբ: Սա «Առաջնագծում» փոտոշարքի վաթսուն էսքիզների երկրորդ ցուցադրութիւնն է. առաջինը կայացել էր ս.թ. Սեպտեմբերին Երեւանում՝ Թէքէյեան Կեդրոնում:*

*Շուշիում ցուցահանդէսի բացմանը ներկայ էին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախեան թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, ԼՂՀ մշակոյթի եւ երիտասարդութեան հարցերի նախարար Նարինէ Աղաբալեանը, Շուշիի եւ Քաշաթաղի շրջվարչակազմերի ղեկավարներ, արուեստասէրներ Շուշիից, Ստեփանակերտից ու Բերձորից, ինչպէս նաեւ ուսանողներ, զինուորականներ:*

*Ցուցահանդէսը, որի կարգախօսն է «Մեր ապագան յուսալի ձեռքերում է», անդրադառնում է ապրիլեան հերոսամարտերին եւ իր մէջ ամփոփում է հայ ժողովրդի ապրելու եւ արարելու ցանկութիւնն ու ձգտումը: Հեղինակն իրականում սահմանագիծ մեկնել էր ոչ թէ լուսանկարելու նպատակով, այլ որպէս երկրապահ, կամաւոր անդամագրուելով «Մերգելեան» ջոկատին: Հանդիպելով երիտասարդ հերոսներին, անտարբեր չի մնացել եւ փորձել է իւրովի մատուցել այդ օրերի փաստագրութիւնը, սահմանային կեանքը:*

*Նայելով առաջնագծում կանգնած զինուորների աչքերին, մտածում ես, թէ ինչքան մեծ է հայ ժողովրդի հաւատն առ Աստուած եւ հասկանում, թէ ինչ հայրենասէր սերունդ է դաստիարակուել անկախութեան 25 տարիների ընթացքում: Զինուորների հայեացքներում տեսնում ես բարութիւն, ապագայի նկատմամբ հաւատ ու յոյսեր: Աստուած պահապան հայ զինուորին ու մեր ժողովրդին:*

*«Առաջնագծում» ցուցահանդէսը Շուշիի արուեստի կեդրոնում բաց կը լինի մինչեւ ս.թ. Նոյեմբերի 30-ը:*

*Հայ լուսանկարիչ Արմէն Ենգոյեանը ծնուել է Երեւանում 1955թ-ին: Աւարտելով Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատել է որպէս փականագործ, ռոբոտային համակարգերի նախագծող, ճարտարապետ, գծագրութեան եւ համակարգչային նախագծման ուսուցիչ, ինչպէս նաեւ Հայաստանի* GPS *համակարգի համար ծրագրի ստեղծման խմբում: Հայկական բնակավայրերի պաշտպանական գործողութիւնների մասնակից է: Աշխատանքային առօրեայ գործունէութեան ընթացքում զբաղուել է լուսանկարչութեամբ: Իսկ վերջին տարիներին ամբողջովին իրեն նուիրել է սիրուած աշխատանքին: 2012թ. ՀՀ Մշակոյթի Նախարարութեան «Իմ եւ մեր յաղթանակները» մրցոյթում արժանացել է 3-րդ մրցանակի: Արմէն Ենգոյեանի լուսանկարները բազմիցս տպագրուել են հայաստանեան եւ արտասահմանեան ամսագրերում, թերթերում, ցուցադրուել են Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, Հունգարիայում, ԱՄՆ-ում:*

## «ՀՐԱՆԴ ՏԻՆՔ» ՀԻՄՆԱՐԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ ՎԱՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*Պոլսոյ Հրանդ Տինք Հիմնարկի հաւաքատեղիին մէջ Նոյեմբեր 11ին բացումը կատարուեցաւ երկօրեայ գիտաժողովի մը նուիրուած «Վանի եւ շրջակայքի հասարակական, մշակութային եւ տնտեսական պատմութեան»: Այս առթիւ Իսթանպուլ հրաւիրուած էին հայ եւ օտար բազմաթիւ պատմաբաններեւ գիտնականներ, գլխաւորութեամբ պատմաբան եւ ցեղասպանութեան թեմայի մասնագէտ փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան: Ելոյթներով հանդէս եկան պատմաբաններ Թէյմոն Գէորգեան, Ռոնալտ Սիւնի, Միքայէլ Նշանեան, Անուշ Թամար Սիւնի, Պարպարա Մէրկէրեան, Հայկ Մարտիրոսեան, Վազգէն Դաւիթեան եւ ուրիշներ:*

*Եզրափակիչ նիստին նախագահեց Այհան Աքթար, որուն ընթացքին կատարուեցան բանավէճեր, մեկնաբանութիւններ եւ շահեկան առաջարկութիւններ:*



## ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ



ՍՕՆԱ ՊԱՏԱԼԵԱՆ

*Մշակոյթի ամիս՝ Հոկտեմբերը ակներեւ էր Սահակ-Մեսրոպ Վարժարանէն ներս:*

*Դպրոցիս բակի ցուցատախտակին վրայ դրուած էին Հայերէն բանաստեղծութիւններ եւ մանրանկարներ: Յիշուած էր առաջին հայերէնի ուսուցիչը, այբուբենը հնարողը՝ Մեսրոպ Մաշտոցը:*

*Դասարաններու մէջ կային ձեռային աշխատանքներ եւ գրութիւններ: Կը խօսուէր հայկական մշակոյթի զանազան պատկերներու մասին ինչպէս՝ նկարչութիւն, երաժշտութիւն, պար, տարազ եւ ճաշատեսակ:*

*Այս առթիւ Հոկտ. 21ի յետմիջօրէին Մանկապարտէզէն մինչեւ Միջնակարգի աշակերտները առիթը ունեցան վայելելու երաժշտագէտ, Պրն. Ա. Գէորգեանի հայկական նուագարանները: Ան մէկ ժամուան ընթացքին ցուցադրեց եւ բացատրութիւններ տուաւ հայկական երաժշտական գործիքները, միեւնոյն ժամանակ մասնակից դարձնելով աշակերտները, ոգեւորելով զանոնք, հարց պատասխաններով եւ միասնակամ երգեցողութեամբ:*

*Այս ծրագիրը գոհացուց մեր աշակերտները, որոնք մօտէն ծանօթացան հայկական տուտուկին, շուիին, քամանչային եւ սազին:*

*Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք Պրն. Ա. Գէորգեանին տրամադրած ժամանակին եւ հաճելի կերպով տրուած բացատրութիւններուն համար:*

*Յաջորդ ձեռնարկը տեղի ունեցաւ Հոկտ. 25, 2016ին: Ծնողներ եւ հիւրեր կը փութային դպրոց ներկայ ըլլալու օրուան միջոցառումներուն:*

*Առաւօտուն Մանկամսուրի փոքրիկները դպրոցիս սրահին մէջ, իրենց մանկական շրթներով երգեցին եւ արտասանեցին եւ փառք տուին, որ հայերս ունինք մեր սեփական հայերէն գիրերը:*

*Իսկ կէսօրէ ետք դարձեալ դպրոցիս սրահին մէջ հաւաքուած էին Մանկապարտէզէն Միջնակարգի աշակերտութիւնը, որոնք առաջին առիթով միասնաբար երգեցին հայկական քայլերգը:*

*Ապա Տիկ. Պատալեան հանդէս եկաւ ողջոյնի խօսքերով: Ան յիշեց Թարգմանչաց տօնին կարեւորութիւնը Սահակ-Մեսրոպ Վարժարանի մէջ եւ վարեց օրուան յայտագիրը:*

*Ձ. Դասարանի աշակերտները Ք. Սահակեան եւ Ա. Խաչիկեան կատարեցին բացման խօսքը, որուն յաջորդեց գեղարուեստական յայտագիրը:*

*Ա. Դասարանէն մինչեւ Ե. Դասարանի աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին խմբային արտասանութիւններով եւ խմբերգներով՝ կեդրոնական նիւթ ունենալով Մայրենի Լեզու եւ Հայաստան խորագիրները:*

*2րդ դասարանի փոքրիկ դերասանները կատարեցին հաճելի ներկայացում մը: Իսկ 6րդ կարգի աշակերտները ներկայացուցին հակիրճ հայերէն տրամախօսութիւն մը:*

*Բոլոր աշակերտները իրենց բաժինները կատարեցին մեծ աշխուժութեամբ, ինքնավստահութեամբ եւ հպարտութեամբ, դիտելով ներկաները, որոնք խորասուզուած մտիկ կ՚ընէին եւ անհուն վայելքի պահեր կ՚ապրէին, ականատես եւ ականջալուր ըլլալով հայ դպրոցին կատարած դերին եւ առաքելութեան:*

*Հաճելի էր նաեւ ունկնդրել մեր հիւրը՝ բանաստեղծ «Կայլակ»ը, որ իր բանաստեղծութիւններէն մէկը արտասանեց մեծ ապրումով եւ հարազատ զգացումով:*

*Մշակոյթի օրուան յայտագիրը հասաւ իր աւարտին Տիկ. Պատալեանի եզրափակիչ շնորհաւորական եւ քաջալերական խօսքերով, այս յաջող ձեռնարկին համար: Ան շեշտեց, որ աշակերտները նկատի առնեն իրենց ծնողաց եւ ուսուցիչներուն զոհողութիւնները եւ ըլլան հպարտ եւ տիպար հայորդիներ, վստահեցնելով, որ անոնք պիտի ըլլան մեր ղեկավարները, մանկավարժները եւ քաղաքագէտները պատիւ բերելով հայ ազգին:*

*Պաշտօնական յայտագրէն վերջ, անակնկալ էր դիմաւորել հայկական նուագախումբը, որոնք ներկայացան տուտուկով, դափով եւ զուռնայով: Անոնք նուագեցին հայկական պարեղանակներ, ուր աշակերտներ խանդավառուած սկսան շուրջպարեր կատարել դպրոցիս շրջափակին մէջ: Ջերմ պահեր էին բոլորին համար. մինչ հայկական «քաթան» կը հրամցուէր բոլորին: Ուրախութիւնն ու հրճուանքը հասած էր իր գագաթնակէտին:*

*Ներկաները լիցքաւորուած այս օրուան յայտագրէն, գոհունակ սրտով եւ բաւարարուած հոգիով վերադարձան, իրենց զաւակները վստահելով Սահակ-Մեսրոպ հայկական դարբնոցին, ուր փոքրիկներ կը ստանան հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութիւն:*

*Վարձքը կատար եւ նորանոր յաջողութիւններ մեր հայերէնի եւ երաժշտութեան ուսուցիչներուն, որոնք իրենց կարելին չեն խնայեր, մեր մատղաշ սերունդին մէջ կերտելու հայու հոգին:*

*Ապագայի լաւ յոյսերով եւ տեսլականով հրաժեշտ տուինք ունենալով անմոռանալի յիշատակներ:*

## ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍԸ՝ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ



*«Զօրութիւնդ ու Լոյսդ Անպակաս, Սուրբ Մեսրոպ»*

*Հոկտեմբեր 2016ն է. աշխարհի ամբողջ տարածքին ապրող հայ ժողովուրդը ողջունեց Հոկտեմբերին՝ Հայ Մշակոյթի ամսուան գալուստը: Իւրաքանչիւր հայու սիրտ հպարտութեամբ լեցուեցաւ ի լուր իր հազարամեայ մշակութային ժառանգը գովաբանող խօսքերուն: Հայկական վարժարաններ յաճախող աշակերտները եռանդով երգեցին ու արտասանեցին առաջին հայ ուսուցչին նուիրուած տաղեր: Նախորդ տարիներուն նման, այս տարի եւս Մերտինեանէն ներս Հոկտեմբերը լի էր զանազան գործունէութիւններով, բոլորն ալ նուիրուած Հայ Մշակոյթին, անոր սէրը աւելի արմատացնելու համար հայ աշակերտին սրտին ու մտքին մէջ: Հոկտեմբեր 17ին, Touch of Art հաստատութիւնը նկարեց մեծ թիւով աշակերտներ՝ հայկական տարազներով: Հոկտեմբեր 24ին, Ա.-էն Ը. կարգերու աշակերտները նախ լսեցին հայկական ծիրանին եւ հայութիւնը խորհրդանշող այլ պտուղներու նասին, ապա դիտեցին «Apricot the Blessed tree of Arme-*

Շար.ը էջ 15



# ՍՈՒՐԵՆ ԽՈՒՏԱՆԵԱՆԻ ԴԱՄԲԱԿԱՆԸ (ԿԵՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ)

*Սիրելի սգակիր բարեկամներ, հարազատներ եւ ընկերներ.*

*Այսօր բոլորս ապրում ենք կորստեան մեծ վիշտը մեր սիրելի Կէրիի:*

*Անգուգական մի ընկեր, անմնացորդ նուիրումով ամուսին, հայր եւ բառիս ամենալայն իմաստով ուրիշի հոգսով ապրող մի մարդ:*

*Դաժան մահը մեզանից խլեց նրան յանկարծակի եւ անժամանակ, բառերը երեւի անզօր լինեն բնութագրելու կորստեան չափը եւ բովանդակութիւնը ընտանիքի եւ հարազատների համար:*

*Զգալի է Կէրիի անհաւատալի կորուստը, իրեն համար այդքան սիրելի կուսակցութեան եւ կուսակցական ընկերների համար: Քանզի մեծ էր նրա ներդրումը կազմակերպչական հարցերում: Ոչ ոք չի կարող ուրանալ նրա յամառ ջանքերը Լաս-Վեկասում Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղի ձեւաւոր-ման հարցում:*

*Սկզբունքային էր հայրենասիրական գաղութիս հայապահպանութեան հարցերում: Յամառ էր իր գաղափարական համոզմունքներում: Գաղութիս Հայ-Ամերիկեան քաղաքական դաշտում կուտակած զգալի փորձ ունէր, որոնք իրեն թոյլ էին տալիս փրոֆեշնալ մօտեցումով նպաստել ճիշտ որոշումների կայացմանը:*

*Անողոք էր այն երեւոյթների հանդէպ որտեղ փորձ էր արւում հայրենական կամ կուսակցական շահը ստորադասելու անձնական կամ խմբային շահերին: Եթէ երբեմն սրտնեղւում էր, երբեք թոյլ չէր տալիս իրեն խռովքն ու ատելութիւնը տիրապետի, այլ աշխատում էր հասնել ներքին խաղաղութեան, ապա արդարացի եւ ճիշտ լուծումներ գտնել:*

*Կէրիի մանկութիւնը անցաւ Լոս Անճելոսում: Իր ծնողների եւ եղբօր Մայքի հոգատար մթնոլորտում, կարողացաւ աճել, հասունանալ առանց ազգային արմատներից կտրուելու: Դեռ պատանի տարիներից Կէրին աչքի է ընկել իր կամային յատկանիշներով, ընկերային եւ հասարակական կեանքում սկսեց իրեն աւելի ակտիւ դրսեւորել:*

*Անդամագրուելով «Կայծ» Երիտասարդական Միութեանը, շուտով իր յամառ ակտիւութեան շնորհիւ, յայտնուեց առաջնորդի դիրքերում:*

*Զարմանալի խանդավառութեամբ կատարում էր Մեծ Եղեռնի հետ կապուած իր վրայ դրուած խիստ պատասխանատու աշխատանքները:*

*Աւելի քան 10 տարի է ինչ ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի Վարիչ Մարմնի անդամ է, սկզբից ՀՄՄ-ի դիւանն էր ղեկավարում, իսկ վերջին տարիներին ստանձնել էր ՀԱԽ-ի «Հայ Ամերիկեան Խորհրդի»-ի դիւանապետի պատասխանատու աշխատանքը, որը կատարում էր մեծ նախանձախնդրութեամբ:*

*1999-ից «Նոր Սարունդ» մշակութային միութեան եւ ՍԴՀԿ-ն «Կայծ» երիտասարդական միաւորման անմիջական մասնակցութեամբ նշում է Հայաստանի անկախութեան փառատօնը:*

*Հայրենասիրական այդ կարեւոր միջոցառման կազմակերպչական գործը առանց Կէրիի պարզապէս անհնար էր պատկերացնել:*

*Մեր այս կենսախինդ հայրենասէր Կէրին 2007-թուին սիրոյ դաշինքը կնքեց իր կեանքի եւ ոչ միայն կեանքի այլ նաեւ Կուսակցական ընկերոջ Սուզի Հայրապետեանի հետ:*

*Այս սիրոյ պտուղը եղաւ Սամուէլը, որը արդէն 8 տարեկան հասակում ճաշակում է այդքան սիրելի հօր կորուստը:*

*Կէրին նոյնպէս կրեց այդ ցաւը, եւ ծնողների կորստեան վիշտը տանելով, տեղափոխուեց Լեսվեկաս:*

*Կազմակերպուած անձնաւորութիւն էր, որը իր դիւրազգաց խառնուածքով, հանգիստ չառաւ, նախաձեռնեց եւ Վարիչ Մարմնի որոշ ընկերների աջակցութեամբ, ինչպէս նաեւ Հայաստանի Հնչակեան կուսակցութիւնում ներդրում ունեցող Ճորջ Յակոբեանի մասնակցութեամբ, ծնունդ տուեց Լաս-Վեկասի Հնչակեան նոր կառոյցին:*

*Ահա եկել է հրաժեշտի պահը, այս ազնուաբարոյ եւ նուիրուած ընկերոջը:*

*Սիրելի Կէրի*

*Քո այրիացած սիրասուն տիկնոջդ եւ զաւակիդ հետ միասին, սգում ենք ոչ միայն եղբայրդ՝ Մայքը, եւ միւս ազգականներդ, այլ մի ողջ բազմութիւն, այդ թւում կուսակցական ընկերներդ:*

*Մենք բոլորս խորը վշտով գլուխ ենք խոնարհում քո շիրիմի առջեւ, եւ մայր կուսակցութեան դրօշի ուղղեկցութեամբ քեզ բարի երթ ենք մաղթում:*

*Գնաս բարով յաւերժի ճամբորդ:*

# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԵՐԻ ՍԻՆԱՆԵԱՆԻ



*Կէրի Սամուէլի Սինանեանը ծնուել է Նիւ Եորքում, Օգոստոսի 24-ին 1977 թուին, Արուս եւ Սամուէլ Սինանեանների ընտանիքում: Նա ունէր աւագ եղբայր՝ Մանուկ Սինանեան, որի տարիքային տարբերութիւնը շատ չէր, բայց Մանուկը հոգատարութիւն ցոյց կու տար եղբօր հանդէպ:*

*Կէրի Սինանեան իր նախնական կրթութիւնը ստացել է Հոլիվուտի Ֆրանգլինի նախակրթական դպրոցում: Այնուհետեւ ուսումը շարունակում է Մարշըլ Քինկ երկրորդական դպրոցում: Դեռ եւս դպրոցական տարիներից, նա օժտուած էր կազմակերպչական ունակութեամբ որ նա օգնեց իր ծնողների հետ ղեկավարել ընտանեկան փոքրիկ ծաղիկի գործ:*

*2006 թուականին Կէրին ծանօթանում է Սիւզի Հայրապետեանի հետ եւ 2007 թուականին ամուսնանալով նրա հետ՝ կազմում են համեստ հայկական օճախ օտար ափերում:*

*2008 թուին Նոյեմբեր 14-ին ծնւում է նրանց անդրանիկ որդին, Սամուէլիկը որը տունը լցնում է խինդ ու ծիծաղով եւ նա դառնում է տատիկի եւ պապիկի ուրախութեան պատճառը, որոնք մեծ հոգեկան բաւականութիւն էին ստանում:*

*Կէրիի կազմակերպչական կեանքում կարծես ինչ որ մի բան պակսում էր եւ նա իրեն գործի զուգահեռ, նուիրում է իր կեանքը Սոցիալ Դեմոկրատական Հնչակեան Կուսակցութեան աշխատանքներին եւ լինում է Վարիչ Մարմնի անդամներից մէկը: Շատ ժամանակ չ՛անցած նա արժանանում է իր շրջապատի մարմինների յարգանքին:*

*2012 թուականին, Կէրի խորը վիշտ է ապրում կորցնելով իր մօր եւ հօր՝ 2014 թուականին: Կարճ ժամանակում, այդ դժուարին վիճակից դուրս գալով նա նորից իրեն նուիրում է կուսակցական գործի, որը նրան մեծ լիցք էին տալիս:*

*2015 թուականին նրանք տեղափոխուում են Լաս Վեկաս: Լաս Վեկասում՝ տեղի է ունենում Սբ. Կարապետ Հայկական եկեղեցւոյ բացումը, որը նրան շատ ուրախութիւն է պատճառում:*

*Այդ շրջանում Կէրին շրջապատուած լինելով Հնչակեան Կուսակցութեան ընկերներով, հիմնադրում են Լաս Վեկասում «Հայկ Բժշկեան» Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղը: Այդ յաջողութիւններով դրա դէմքը իւրայատուկ փայլք էին ստանում: Շատ ու շատ կարելի է խօսել Կէրիի կազմակերպչական աշխատանքների մասին: Բայց Հոկտեմբեր 13-ին 2016 թուականին, կարճատեւ եւ յանկարծակի անհանգստութիւնը ցնցում է իր ընտանիքին, հարազատներին, ընկերներին, վերջ տալով նրա երիտասարդ կեանքին:*

*Նա կը մնայ որպէս սիրող եւ սիրուած ամուսին, հոգատար հայր, եղբայր, անկեղծ հարազատ ընկեր:*

*Հանգչիր խաղաղութեամբ, մենք քեզ միշտ կը յիշենք եւ կը սիրենք ինչպէս որ դուն կաս:*

# ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍԸ

Շարունակուած էջ 14-էն

*nia» ժապաւէնը: Հոկտեմբեր 25-28ին տեղի ունեցաւ հայերէն գիրքերու եւ յուշանուէրներու ցուցահանդէս - վաճառք: Ձեռնարկը մեծ հետաքրքրութիւն եւ խանդավառութիւն առաջացուց աշակերտներուն եւ անոնց ծնողաց մօտ. ամէն կողմ եռագոյն կը տեսնուէր՝ հագուստ, շապիկ, մազկապ, վզկապ, զարդեղէններ, դրօշակներ, եւայլն: Հոկտեմբեր 28ի կէսօրին, աշակերտներ, ծնողներ, ուսուցիչներ միասնաբար ճաշակեցին հայկական համեղ խորոված, իսկ ճաշէն ետք ծախուեցան հայկական ճաշեր. այս բոլորը պատրաստուած էր Ծնողա-Ուսուցչական մարմնի տիկիններուն կողմէ: Նոյն օրը, կէսօրէ ետք, Ե. կարգի աշակերտները ներկաներուն հրամցուցին Հայ Մշակոյթին նուիրուած կոկիկ յայտագիր մը՝ ուր տեղ գտած էին երգեր, արտասանութիւններ եւ թատերգութիւն մը՝ Թումանեանի «Զարին Վերջը»: Բացման խօսքը, Յովհաննէս Թումանեանի ծանօթացումը եւ յայտագրի ներկայացումը կատարեցին Ը. կարգի աշակերտները: Շաբաթ, Հոկտեմբեր 29ի առաւօտուն, տեղի ունեցաւ մանկական երգահանդէս մը, կատարողութեամբ մանուկներու շատ սիրելի երգչուհի՝ Թալինի: Վարձքը կատար՝ բոլոր անսակարկ ծառայող ծնողներուն եւ երկար արեւ՝ անձնուրաց ուսուցիչներուն:*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA
$ 125,00 (Air Mail) for Canada.
$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ---------------------------------------------
Address: ------------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :---------------------- Email: -----------------------

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

## ԻՆՉՈ՞Ւ ԿԱՐԵՒՈՐ Է ԻՆՔԶԻՆՔ ՅԱՐԳԵԼԸ

*Սեփական արժանապատուութեան զգացողութիւնը գոյութիւն ունի ի ծնէ: Ի՞նչ ընել, եթէ կեանքի հանգամանքները ստի պած են ձեզի կասկածիլ, իսկ նախկին զուգընկերները օգնած են ցած ինքնագնահատականի կազմաւորման մէջ:*

*Նախ եւ առաջ հասկնանք, թէ ի՞նչ է յարգանքը սեփական անձին հանդէպ: Ամենալաւը անիկա բացատրած է հոգեբան Ուիլեըմ Ճէյմսը. «Ինքնայարգանքը յաջողութիւն է՝ բազմապատկած մեր յաւակնութիւններով»: Այսինքն, յարգանքը մեր սեփական անձին հանդէպ ուղիղ յարաբերական է յաջողութիւններու քանակին: Որքան բարձր են անոնք, այդքան աւելի շատ պէտք է ըլլան մարդու ձեռքբերումները, այլապէս յարգան քը կը տուժէ: Անոր պահպանման համար կայ երկու տարբերակ՝ առաւե լա գոյնս ջանքեր գործադրել եւ յաջողութեան հասնիլ, կամ իջեցնել յաւակնութիւններուն մակարդակը: Այդ պարագային, նոյնիսկ ամենահամեստ յաջողութիւններու պարագային, դուք չէք կորսնցներ դուք ձեր հանդէպ յարգանքը: Նշաններ, որոնք ցոյց կու տան, որ դուք այդքան ալ չէք սի րեր դուք ձեզ կամ ընդհանրապէս չէք սիրեր. - Կը խուսափիք զրուցակիցի հետ տեսողական կապէն: - Կը վախնաք արտայայտել ձեր կարծիքը: - Կը սիրէք քննադատել դուք ձեզ: - Չէք կրնար հաճոյախօսութիւններ ընդունիլ: - Չափազանց համեստ էք: - Չէք սիրերգուել դուք ձեզ: - Գրեթէ միշտ կը քալէք կուչ եկած եւ աչքերը կ՚իջեցնէք: - Անյարմար կը զգաք, երբ մարդոց շրջապատի մէջ էք: Դուք ձեզ օգնելու հասարակ խորհուրդներ.*

*1.Թոյլ տուէք դուք ձեզ ըլլալ ոչ կատարեալ: Ատիկա կը նշանակէ, որ դուք իրաւունք ունիք սխալելու, յիմարութիւն ընելու ու յայտնուելու ոչ այդքան հաճելի իրավիճակներու մէջ:*

*2.Ներեցէք դուք ձեզ բոլոր անցած անյաջողութիւններուն հա մար: Մէկընդմիշտ դադրեցէք բացասականը քչփորելէն եւ երեւան հանելէն:*

*3.Հասկցէք ինչ կը փափաքիք: Հոգ տարէք դուք ձեզ, պարգեւեցէք փոքր ուրախութիւններ եւ նուէրներ:*

*4.Ընդունեցէք դուք ձեզ՝ ձեր անկատարելութեան մէջ: Սիրեցէք դուք ձեզ ձեր իւրայատկութեամբ, շեշտը դրէք ձեր առաւելութիւններուն վրայ:*

*5.Պաշտպանեցէք ձեր սահմանները: Մի հանդուրժէք ձեր հան դէպ անարդար վերաբերմունք: Պատասխանեցէք ձեզ նեղացնողին:*

*6.Երբեք դուք ձեզ մի համեմատէք ուրիշներու հետ: Ինչ որ լաւ է մէկուն համար, կրնայ միւսին համար անընդունելի ըլլալ:*

*7.Անպայման նշեցէք ձեր յաջողութիւնները: Նոյնիսկ ամենաաննշան յաջողութիւնները պէտք է նշել եւ հպարտանալ անոնցմով:*

*8.Մարմնամարզանքով զբաղեցէք: Անկախ անկէ, թէ քանի քիլոկրամ դուք պիտի կորսնցնէք մարզասրահին մէջ՝ յարգանքը սեփական անձին հանդէպ պիտի մեծնայ: Առնուազն անոր համար, որ դուք չէք ծուլանար եւ կանոնաւոր կը յաճախէք մարզասրահ: Իսկ լաւ կազմուածքը, որ դուք պիտի ունենաք ձեր ջանքերուն շնորհիւ՝ այլ առիթ է դուք ձեզ սիրելու համար: Կանոնները շատ դիւրին են եւ հասկնալի: Սակայն շատերը պիտի ըսեն. «Ամէն ինչ կը հասկնամ, բայց ինչպէ՞ս օգնեմ ես ինծի՝ չեմ գիտեր»: Խնդիր չէ: Պէտք է սորվիլ: Եթէ դուք երեք շաբաթ յաջորդաբար հետեւիք այս խորհուրդներուն, 4-րդին դուք լրիւ այլ կերպ պիտի ընկալէք դուք ձեզ:*

## ԿԱԽԵԱԼՈՒԹԵՆԷՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

*Դուք հաւաքուած էք ընկերներով եւ լաւ ժամանակ կ՚անցնէք, երբ յանկարծ ծանօթ ձայն կը լսէք՝ դուք ունիք նոր հաղորդագրութիւն: Ձեռքը կը տանիք հեռախօսին: Այս իրավիճակը ծանօթ է բոլորին: Իսկ երբեմն ձանձրացած հիւրը ուշադրութիւն չի դարձներ շրջապատին եւ նստած է սմարթֆոնին նայելով: Ասիկա կը կոչուի «արհարմարհական վերաբերմունք»: Այս վերաբերունքը տարածուած երեւոյթ է ժամանակակից հասարակութեան մէջ, երբ զրուցակիցը խօսակցութեան ժամանակ անընդհատ կը շեղի հեռախօսի վրայ՝ կը պատասխանէ հասարակական ցանցերով ուղարկած հաղորդագրութիւններուն, կը նայի նորութիւնները, ինքը կը գրէ:*

*Այս սարքերը իրականութեան մէջ չարիք են. Մեր հեռախօսով զբաղելով մենք չենք նկատեր մեզ շրջապատող կեանքը: Խուսափելով իրական կեանքէն եւ ընկղմելով համացանցի մէջ՝ մարդիկ կ՚արհամարհեն շրջապատին մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները: Ըստ հետազօտութիւններու՝ «արհամարական վերաբերմունք»ը յարաբերութիւներ կը կործանէ: Բացի այդ, հեռախօսը ստուգելու մշտական ցանկութիւնը բացասաբար կ՚ազդէ մարդու կեանքի հասարակական մասին վրայ, քանի որ այլ մարդոց հետ շփումները կը տկարանան կամ կրնան ամբողջութեամբ խզուիլ: Հեռախօսը դարձնելով ձեր լաւագոյն ընկերը, դուք կը զրկուիք ժամանցի հիանալի պահերէ: Իսկ ամենակարեւորը դուք կը կորսնցնէք ամենաարժէքաւորը՝ ժամանակը: Դրական կողմերէն կարելի է նշել մարդու տեղեկացուածութեան բարձր աստիճանը թէ՛ աշխարհի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններէն, թէ՛ ծանօթներու եւ ընկերներու կեանքին մէջ տեղի ունեցող նորութիւններէն: Սակայն այս դրական կողմին հետ կապուած է «կորսնցնելու» վախը եզրոյթը, որ կը նշանակէ վախ ուշ տեղեկանալու համար: Հոգեբանները խորհուրդ կու տան ազատիլ այդ կախեալութենէն՝ խուսափելու համար ընկճախտներէն եւ անձնական կեանքի մէջ հակամարտութիւններէն: Ատոր կարելի է հասնիլ միայն ինքնավերահսկման մեքենականութիւններու միջոցով, որոնք պիտի ապահովեն կեդրոնացում կենդանի շփման մէջ:*

*Կարելի է նաեւ փորձել հետեւեալ տարբերակները.*

*1. Հեռախօսը տուն ձգեցէք եւ ձեր օրը անցուցէք առանց անոր:*

*2. Եթէ ընկերական հանդիպման ժամանակ ընկերներէն մէկը անընդհատ կը նայի հեռախօսին, փորձեցէք ցրուել զինք՝ բան մը կազմակերպելով:*

*3. Զբօսնեցէք ընկերներու հետ այնտեղ, ուր չկայ կապ:*

*4. Երեկոյթի ընթացքին տուէք հեռախօսը ձեր ամենավստահելի ընկերոջ, որ նոյնիսկ տանջանքներու սպառնալիքի տակ չվերադարձնէ զայն ձեզի՝ մինչեւ ձեռնարկին աւարտը:*

## ԻՆՉՊԷՍ ՄՈՌՆԱԼ ՎԻՐԱՒՈՐԱՆՔԸ. ՅԻՇԱՉԱՐՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ՝ ՈՒՂՂԱԿԻ ԼԱՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

*Հոգեբաններու կարծիքով՝ վիրաւորանքը, իրականութեան մէջ հակասութիւն է, որ ուղղուած է առաջին հերթին ձեզի դէմ: Եթէ դուք վիրաւորուած էք որեւէ բանէ, ուրեմն համաձայնած էք ըսուածին հետ: Հետեւաբար դուք ձեզ կը վշտացնէք:*

*Փաստեր. Յայտնի է, որ հոգիի եւ մարմնի կեանքը սերտօրէն կապուած են իրարու հետ: Գիտնականները ապացուցած են, որ ցած ինքնագնահատականով յիշաչար մարդիկ յաճախ կ՚ունենան քաղցկեղային հիւանդութիւններ: Ատիկա կը նշանակէ. որ վիրաւորանքը ներսը կուտակելը վտանգաւոր է: Մարդը նեղացնել կարելի է միայն այն պարագային, երբ ան կ՚ուզէ այդ: Բարձրացուցէք ինքնագնահատականը, սիրեցէք եւ ընդունեցէք դուք ձեզ այնպէս, ինչպէս որ էք: Վիրաւորանքէն ազատելու համար վերլուծեցէք բոլոր հան գամանքները, որուն համար մարդը ձեզ վիրաւորած է: Հասկցէք, որ ձեզ նեղացուցած է օտար մարդ, մտերիմը երբեք չ՚ըներ ատիկա: Ան չի կրնար կարդալ ձեր միտքերը եւ պարզել, թէ ի՞նչը կրնայ ձեզ նեղացնել: Միջոցներ՝ վիրաւորանքը մոռնալու համար. Թուղթի վրայ գրեցէք ձեզ վիրաւորողին անունը եւ թուարկեցէք, թէ ինչու ան մեղաւոր է: Մի շտապէք, մտածեցէք, ի՞նչ հան գամանքներով տեղի ունեցած է ատիկա, յիշեցէք, թէ ի՞նչ զգացած էք: Եթէ դուք ճիշդ կատարէք այս վարժութիւնը՝ թեթեւութիւն պիտի զգաք: Եթէ վիրաւորանքը, այնուամենայնիւ, չէ անցած՝ փակեցէք աչքերը, պատկերացուցէք ձեզ նեղացնողը, յիշեցէք հանգամանքները: Այնուհետեւ յիշեցէք որեւէ անէական դրուագ ձեր կեանքէն եւ պատկերը մտովի տեղափոխեցէք այնտեղ, ուր դուք վիրաւորուած էք: Կրկնեցէք այդ վարժութիւնը մինչեւ վի րա ւորանքը անցնի: Սովորաբար 3-5 անգամը բաւարար է: Եթէ դուք չէք կրնար մոռնալ հին վիրաւորանքները, ձեր ուշադրութիւնը կեդրոնացուցէք ներկայի վրայ: Մշտապէս մտածեցէք ոչ թէ այն մասին, թէ ինչ եղած է, այլ այն, թէ ինչ կայ: Տրամադրուեցէք դրական, եթէ դուք սկսիք յիշել վիրաւորանք ները, միանգամայն արգելափակեցէք զանոնք կեանքի հաճելի դրուագներու օգնութեամբ:*

## Ի՞ՆՉԸ ԿԸ ՍՊԱՆՆԷ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*1. Վէճերը- Տարաձայնութիւնները անխուսափելի են: Վաղ թէ ուշ ոեւէ զոյգ կը հանդիպի այս կամ այն խոչընդոտին: Ատիկա բնական է: Վէճերը կը կազմեն երջանիկ յարաբերութիւններուն մէկ մասը: Սակայն չափը անցնել պէտք չէ: Մի վիրաւորէք զիրար, մի նուաստացնէք ձեր զուգընկերը եւ միշտ յիշեցէք՝ չկայ այդպիսի խնդիր, որ հնարաւոր չէ լուծել փոխզիջման միջոցով:*

*2. Լռութիւնը- Ոչ ոք կրնայ կարդալ ձեր մտքերը, նոյնիսկ սիրելին: Խնդի՞ր կայ: Ըսէք այդ մասին: Որեւէ բան հաճելի չի՞ թուիր: Խօսեցէք: Զգացումներու արտայայտումը՝ ինչպէս դրական, այնպէս ալ բացասական, հոգեբանական առողջութեան գրաւականն են:*

*3. Ջնջելը- Բոլորն ալ կը սխալին: Դուք նոյնպէս: Սորվեցէք ներել սիրելիներուն: Մի պահէք եւ մի կուտակէք վիրաւորանքները: Ատիկա ոչ միայն պի տի փրկէ ձեր յարաբերութիւնները, այլ նաեւ պիտի օգնէ խուսափիլ անցանկալի ճնշուածութենէն:*

*4. Ոչ ժամանակն է, ոչ ալ վայրը- Կարեւոր հարցերը պէտք է քննարկել յարմար պահուն եւ յարմար վայրի մէջ: Զ՚արժեր սկսիլ խօսիլ, օրինակ, տեղափոխուելու մասին, ծանր աշխատանքային օրէն յետոյ: Միավանկ պատասխանները, կամ գլխով նշան ընելը անտարբերութեան նշան չեն, պարզապէս ձեր զուգընկերը յոգնած է եւ քննարկելու ուժ չունի: Յետաձգեցէք զրոյցը:*

*5. Նիւթականը- Յարաբերութիւններուն մէջ կ՚ակնկալուի ոչ միայն վերցնել, այլեւ՝ տալ: Սակայն պէտք չէ ըլլալ մանրակրկիտ, յատկապէս նիւթական հարցերու մէջ: Պայմանաւորուեցէք կարեւոր բաներու մասին՝ ինչպէս վարել տնային տնտեսութիւնը, վճարել հաշիւները, դասակարգել պիւտճէն:*

*6. Լուն ուղտ մի դարձնէք- Ոչ ոք կատարեալ չէ: «Ան մոռցած է աղբը թափել: Ան արդուկով վառած է ձեր վերնաշապիկը: Ան սխալ մածուն գնած է: Ան չէ վճարած համացանցին համար»: Հաւատացէք, ասիկա յիմարութիւն է, որ նոյնիսկ արժանի չէ ձեր ուշադրութեան, ալ չենք խօսիր զգացումներու մասին: Լուն ուղտ մի դարձնէք: Փոխարէնը զբօսնեցէք եւ աղբը թափեցէք: Ծիծաղեցէք վառած վերնաշապիկին վրայ, չէ՞ որ ժամանակն է նորը գնելու: Փորձեցէք «սխալ» մածունը, հաւանաբար անիկա աւելի համեղ է: Վառեցէք մոմերը եւ ռոմանթիկ երեկոյ անցուցէք՝ առանց համացանցի:*

*7. Լրտեսումը- Սէրը կը կառուցուի վստահութեան շնորհիւ: Վստահեցէք ձեր կէսին: Ձեր սիրելին կրնայ եւ պէտք է ունենայ իր սեփական տարածքը: Յարգեցէք զինք, մի կարդաք անոր հաղորդագրութիւնները, մի ստուգէք անոր ելեկտրոնական նամակ ները, մի մտնէք անոր գրպանները: Այս ամէնը վիրաւորական են եւ կը փճացնեն յարաբերութիւնները:*

## ՕԳՏԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*1. Օրը սկսեցէք ժպիտով. ոչինչ այդպէս պիտի լիցքաւորէ դրական ուժով:*

*2.Մէկ բաժակ ջուր խմեցէք նախաճաշէն առաջ:*

*3. Սկսեցէք վազել:*

*4.Հրաժարեցէք ծխախոտէն եւ ալքոլէն:*

*5. Սորվեցէք ծրագրաւորել ձեր օրը:*

*6. Ամէն օր միրգ եւ բանջարեղէն օգտագործեցէք:*

*7. Աշխատեցէք դրական մտածել:*

*8. Պահպանեցէք կեցուածքը, քալեցէք ուղիղ:*

*9. Առաւօտեան մարզանք ըրէք:*

*10. Սնուեցէք չափաւոր՝ օրական 4-5 անգամ նոյն ժամուն:*

*11.Մոռցէք վերելակի մասին. իջէք եւ բարձրացէք ոտքով:*

*12.Ընդունեցէք առաւօտեան ցնցուղ, անիկա մէկ գաւաթ սուրճէն աւելի լաւ կ՚օգնէ արթննալու:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՏԱՐԱՒ 2018-Ի ԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ



Հայաստանի ֆուտպոլի հաւաքականը Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում հիւրընկալեց Չերնոգորիայի հաւաքականին: Առաջին խաղակէսում հիւրերը 2 կոլ խփեցին եւ շօշափելի առաւելութիւն ստացան, չնայած այդ հանգամանքին Հայաստանի ընտրանին երկրորդ խաղակէսում բեկում մտցրեց խաղի մէջ եւ ոչ միայն հաւասարեցրեց հաշիւը, այլեւ վերջին րոպէին յաղթանակ կորզեց՝ 3:2:

Վճռական գնդակը հակառակորդի դարպասը մխրճեց Գէորգ Ղազարեանը:

«Այս յաղթանակը ոչ թէ ես, այլ բոլորս միասին կերտեցինք: Բոլորից էլ շնորհակալ եմ: Սակայն մենք պէտք է համեստ պահենք մեզ եւ քայլ առ քայլ առաջ գնանք: Անելիքներ դեռ շատ կան: Ուժաղացման կարիք ունեն թիմի բոլոր գծերը: Այսօր մեր տղաները պարզապէս հերոսութիւն արեցին», - ֆուտպոլի աշխարհի առաջնութեան Հայաստան - Չեռնոգորիա ընտրական խաղից յետոյ յայտարարեց հաւաքականի գլխաւոր մարզիչ Արթուր Պետրոսեանը:

## ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Աշխարհի 2018 թուականի առաջնութեան նախընտրական փուլում տեղի ունեցան մի քանի հանդիպումներ:




Հայաստանի հաւաքականի հետ E խմբում ընդգրկուած Լեհաստանի հաւաքականը 3-0 հաշուով յաղթեց Ռումինիային: Երկու կոլ խփեց Ռոբերտ Լեւանդովսկին: Միւս խաղում Դանիան 4-1 հաշուով ջախջախեց Ղազախստանին: Նշենք, որ Լեհաստանը 10 միաւոր ունի, Մոնտենեգրոն՝ 7, Դանիան՝ 6, Ռումինիան՝ 5, Հայաստանը՝ 3, Ղազախստանը՝ 2 միաւոր:

A խմբում Ֆրանսայի հաւաքականը Պոլ Պոգբայի եւ Դիմիտրի Պայեի կոլերի շնորհիւ կամային յաղթանակ տարաւ Շուեդիայի նկատմամբ՝ 2-1: Ֆրանսիացիները վստահօրէն գլխաւորում են մրցաշարային աղիւսակը:

C խմբում Գերմանիան 8-0 հաշուով յաղթեց Սան-Մարինոյին, Չեխիան 2-1 հաշուով պարտութեան մատնեց Նորուեգիային, իսկ Հիւսիսային Իռլանդիայի հաւաքականը ջախջախեց Ատրպէյճանին՝ 4-0: Այս խմբում Գերմանիան 12 միաւորով առաջատարն է եւ 5 միաւորով գերազանցում է 2-րդ տեղը կիսող Հս. Իռլանդիայի եւ Ատրպէյճանի հաւաքականներին:

F խբմում Անգլիա-Շոտլանդիա բրիտանական դերբին աւարտուեց 3-0 հաշուով: Կոլերը խփեցին Ադամ Լալանան, Դանիէլ Սթարիջն ու Գարի Կեհիլը: Միւս երկու խաղերում Սլովենիան 1-0 հաշուով յաղթեց Մալթային, իսկ Սլովակիան 4-0 հաշուով Լիտվային: Անգլիացիները 10 միաւորով առաջին տեղում են, երկրորդ տեղում Սլովակիայի հաւաքականն է՝ 8 միաւորով:

## ԴՈՐՏՄՈՒՆԴԻ «ԲՈՐՈՒՍԻԱՆ» ՄՏԱԴԻՐ Է ՎԱՐՁԱԿԱԼԵԼ ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐԵԱՆԻՆ

Դորտմունդի «Բորուսիան» ցանկանում է ձմեռային տրանսֆերային պատուհանի ժամանակ վարձակալութեամբ ձեռք բերել թիմի նախկին կիսապաշտպան, Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանին, որն ամրանն է տեղափոխուել անգլիական «Մանչեսթեր Եունայթըտ»:

Նշւում է, որ գլխաւոր մարզիչ Թոմաս Տուխելի նախաձեռնութեամբ, գերմանական ակումբն արդէն առաջարկն արել է պորտուգալացի Ժոզէ Մոուրինյոյի գլխաւորած թիմին:

«Բորուսիայում» 114 հանդիպում անցկացրած եւ 33 կոլ խփած Մխիթարեանն Անգլիայում դեռ անցկացրել է 6 հանդիպում եւ մշտական տեղ չունի կազմում:

Հայաստանի ազգային հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը Չեռնոգորիայի դէմ աշխարհի առաջնութեան ընտրական փուլի չորրորդ տուրի խաղում տպաւորել է անգլիական «Մանչեսթեր Եունայթըտի» երկրպագուներին:

Goal.com-ի համաձայն՝ Երեւանի «Հանրապետական» ստադիոնում կայացած հանդիպումից յետոյ անգլիական ակումբի երկրպագուները սոցիալական ցանցերում աջակցել են Մխիթարեանին, որը խաղային պրակտիկա չունի Ժոզէ Մոուրինիոյի թիմում: Ֆանատները «Մանչեսթեր Եունայթըտի» գլխաւոր մարզիչից պահանջել են հայ կիսապաշտպանին մեկնարկային կազմում ընդգրկել Լոնտոնի «Արսենալի» դէմ Պրեմյեր լիգայի 12-րդ տուրի խաղում:

## ՄԱՔՍԻՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ 3-ՐԴՆ Է ՍԱՄԲՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ



Հայաստանի սամբոյի հաւաքականը եւս մէկ մետալ նուաճեց Սոֆիայում ընթացող սամբոյի աշխարհի առաջնութեան երկրորդ մրցումային օրը:

Մարզական սամբոյի տղամարդկանց 57 կգ քաշային կարգում հանդէս եկող Մաքսիմ Մանուկեանը հենց առաջին մարտում պարտուեց ապագայ աշխարհի ախոյեան Վախթանգ Չիդրաշուիլուն: Չնայած անյաջողութեանը, մեր սամբիստը յաղթեց սփոփիչ բոլոր մարտերում, գրաւեցրեց 3-րդ տեղը եւ դարձաւ աշխարհի պրոնզէ մետալակիր:

Նշենք, որ մրցումների առաջին օրը նոյնպիսի պարգեւի էին արժանացել նաեւ Ասիա Լալազարեանը (48կգ քաշային կարգ) եւ Տիգրան Կիրակոսեանը (52կգ):

## ՊՐԱԶԻԼԻԱՆ ՋԱԽՋԱԽԵՑ ԱՐԺԵՆԹԻՆԱՅԻՆ



Աշխարհի առաջնութեան որակաւորման փուլում տեղի ունեցան Կոմնեբոլի (Հարաւային Ամերիկայի) շրջանի հերթական տուրի խաղերը:

Գլխաւոր խաղում Պրազիլիայի հաւաքականը 3-0 հաշուով ջախջախեց Արժէնթինայի հաւաքականին: Կոլերը խփեցին Կոուտինիոն, Նեյմարը եւ Պաուլինիոն: Խաղից յետոյ Արժէնթինայի հաւաքականի աւագ Լիոնել Մեսսին յայտարարել է, որ չնայած ստեղծուած ծանր իրավիճակին, ամէն ինչ իրենց ձեռքերում է եւ նրանք ամէն ինչ անելու են, որպէսզի դուրս չմնան աշխարհի առաջնութեան խմբային փուլի մասնակցութեան իրաւունքից: Նշենք, որ Արժէնթինայի հաւաքականը 11 տուրից յետոյ զբաղեցնում է 6-րդ տեղը, ունի 16 միաւոր եւ այս պահի դրութեամբ դուրս է մնում եզրափակիչ փուլից:

Միւս խաղերում գրանցուեցին հետեւեալ արդիւնքները՝

| | |
|---|---|
| Քոլումպիա-Չիլի | 1-1 |
| Ուրուգուայ-Էկուատոր | 2-1 |
| Պարագուայ-Պերու | 1-4 |
| Վենեզուելա-Պոլիւիա | 5-0 |

Մրցաշարային աղիւսակն ունի հետեւեալ տեսքը՝

| | |
|---|---|
| 1. Պրազիլիա | 24 միաւոր |
| 2. Ուրուգուայ | 23 |
| 3. Քոլումպիա | 18 |
| 4. Չիլի | 17 |
| 5. Էկուատոր | 17 |
| 6. Արժէնթինա | 16 |
| 7. Փարագուայ | 15 |
| 8. Փերու | 14 |
| 9. Վենեզուելա | 5 |
| 10. Պոլիւիա | 4 |

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**
Երբեմն չես անդրադառնար թէ որքան կը վիրաւորես սիրելիներդ երբ յանկարծ կը պոռթկաս: Պատրաստակամ եղիր լսելու քեզի տրուած եղելութիւնները եւ անձնական մտածումներովդ որոշումներու մի յանգիր:
Բախտաւոր թիւերդն են: 7,15,26,32,35

**ՑՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**
Մանկական յիշատակներդ քեզ կը տանջեն: Մտածելով անոնց մասին, դուն քեզ պիտի անհանգստացնես՝ հասնելու յուսահատութեան: Երբ գործերդ կը կատարես, լաւ կ'ըլլայ որ բծախնդրութեամբ եւ համբերութեամբ ընես զանոնք:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,18,21,31

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** **Մայիս 21-Յունիս 20**
Ճիգերուդ եւ աշխատանքներուդ արդիւնքները կը վայելես ու մտքի բացառձակ գոհունակութեամբ լեցուած ես: Մեծ հետաքրքրութիւն ունիս արուեստի նկատմամբ: Հիացումով կը դիտես շուրջիններդ եւ կը սիրես շրջանակդ:
Բախտաւոր թիւերդ են: 4,13,21,25,30

**ԽԵՑԳԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**
Բարեկամ մը յանկարծ պէտք պիտի ունենայ քու օգնութեանդ, պէտք է սիրով եւ համբերութեամբ հասնիս իր պէտքերուն եւ թիկունք կենաս իրեն նեղ օրերուն: Ինքզինքդ պատասխանատու կ'զգաս գործիդ յաջողութիւններուն եւ կը պարծենաս:
Բախտաւոր թիւերդ են: 11,19,24,32,33

**ԱՌԻԾ** **Յուլիս 23-Օգոստոս 22**
Երազներդ պիտի քանդես երբ շարունակես կասկածներ արթնցնել մտքիդ մէջ սուտ խօսքերու արդիւնքով: Հարցականի տակ մի առներ փոքր մանրամասնութիւններ, այլ ընդունէ եղելութիւնները եւ կեանքդ հանդարտ շարունակէ:
Բախտաւոր թիւերդ են: 19,20,27,30,34

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Ընտանիքիդ նկատմամբ ունեցած վերաբերմունքդ բարեփոխելու ես եթէ կ'ուզես ուրախ եւ առողջ յարաբերութիւններ ունենալ անոնց հետ: Տարիներու ընթացքին անհամար մարդոց հետ շփուած ես, սակայն դժուարութիւն ունիս հաշտուելու մէկ հոգիի հետ:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,12,27,32

**ԿՇԻՌՔ** **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Վստահութիւնդ սխալ անձերու վրայ դնելով կեանքդ վտանգի տակ դրած կ'ըլլաս: Պատրաստ եղիր ինքզինքդ պաշտպանելու բոլոր անակնկալներէն: Ներկայութիւնդ կրնայ մեծ ազդեցութիւն ունենալ ընկերներուդ վրայ իրենց նեղութեան պարագային:
Բախտաւոր թիւերդ են: 8,16,25,30,33

**ԿԱՐԻՃ** **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Երբ անորոշ կացութիւններու մատնուիս՝ դուն քեզ կը կորսնցնես եւ ցուցմունք կը փնտռես սխալ անձերէ: Փոխանակ վախնալու՝ վստահութեամբ դիմագրաւէ յարձակումները եւ քաջօրէն ինքզինքիդ վստահէ: Գնումներդ քիչ մը թեթեւցուր:
Բախտաւոր թիւերդ են: 1,14,23,26,29

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
Երբ ստիպուած ես ընտրութիւններ ընելու՝ զանոնք ըրէ հիմնուած սկզբունքներուդ վրայ քան յարմարութեանց կամ անձնական հէտաքրքրութիւններու վրայ: Տանդ վերանորոգումը կը զբաղեցնէ միտքդ եւ կ'առնէ բոլոր ժամանակդ:
Բախտաւոր թիւերդ են: 3,7,14,17,23

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
Դուն ընտրած ես լաւագոյն աղբիւրը ինքզինքդ զարգացնելու եւ ինքնազուսպ ըլլալու: Շատ սիրուած ես գործատեղիիդ մէջ եւ քու ներկայութիւնդ պայման է: Կեանքդ փոխուած է վերջին օրերուն, աւելի հանդարտ եւ ուրախ ես:
Բախտաւոր թիւերդ են: 7,12,14,22,23

**ԾՈՎԱՆՈՅՇ** **Յունուար 20-Փետրուար 18**
Շատ ուժեղ դատողութիւն ունիս եւ շուտով ըմբռնելով կացութիւնը՝ յետագայի նախազգուշացումները կ'առնես: Մի նեղուիր երբ մօտ անձ մը կը յանդիմանէ քեզ, քանի որ ան անպայման կը սիրէ քեզ: Գալիք օրերուն ուրախ օրեր պիտի ունենաս:
Բախտաւորն թիւերդ են: 5,8,28,31,34

**ՁՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**
Յաճախ խօսքերդ կը զսպես եւ տկար դուրս կու գաս վիճաբանութիւններէ: Մի վախնար ինքզինքդ պաշտպանելու եթէ նոյնիսկ այդ պատճառ պիտի ըլլայ դիմիցինը վիրաւորելու: Յառաջիկայ շաբթուայ ընթացքին մեծ եւ կարեւոր որոշում մը պիտի առնես:
Բախտաւոր թիւերդ են: 10,16,21,28,35

## Ալիեւը Սկսեց

Շարունակուած էջ 2-էն

*վրայ, դժուար է ասել:*

*Ակնյայտ է, որ այցը ունեցել է էական անհրաժեշտութիւն, եւ միաժամանակ ուշագրաւ է, որ հիւսիսային սահմանը Սերժ Սարգսեանը փաստօրէն թողել էր բաց: Արդեօք դա բաց էր մնացել նաեւ Սանկտ-Պետերբուրգում, թէ՞ Սերժ Սարգսեանը դրանով փորձում էր պատասխանել այդ սահմանի հարցն էլ փակելու Սանկտ-Պետերբուրգի փորձին՝ ցոյց տալով, որ հայկական կողմը չի համաձայնի այդ հարցը փակելուն:*

*Սահմանի հիւսիսային հատուածում կայ առանձնայատկութիւն՝ այնտեղ դիրքային փոփոխութիւնը փաստացի «շարքից հանել է» հայկական բնակավայր, անհնար դարձրել այնտեղ քաղաքացիական կեանքը:*

*Եւ այս իմաստով, ուշագրաւ է Թալիշի վերաբնակեցման անհրաժեշտութեան մասին հայկական կողմից քաղաքական յայտարարութիւնների ինտենսիւացումն ու սահմանին հրադադարի խախտումների ինտենսիւացումն Ատրպէյճանից:*

*Դա ընդհանուր առմամբ Ապրիլի պատերազմից յետոյ ծաւալուած դիւանագիտական-քաղաքական դիրքային պայքարի տրամաբանութեան շրջանակում է, որտեղ ատրպէյճանական կողմը փորձում է ստանալ կամ նոր պատերազմի աշխարհքաղաքական հաւանութիւն, կամ դրա շանտաժի միջոցով ստանալ դիւանագիտական դիւիդենտներ եւ ճնշում հայկական կողմի վրայ, իսկ հայկական կողմը փորձում է ստանալ ստատուս-քուոյի ամրագրման միջազգային մեխանիզմ, թերեւս մինչ այդ ակնկալելով ինչ որ կերպ հասցնել հնարաւորին չափ շտկել Ապրիլի դիրքային խախտումները, կամ կարգաւորման գործընթացում սահմանել նաեւ հիւսիսային սահմանում նոր իրավիճակի որոշակիացման քաղաքական գինը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

## Հ.Բ.Ը.Մ.Ի 89-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Շարունակուած էջ 7-էն

*րուն, երբ, աւելի քան երբեք, հայութիւնը կը դիմագրաւէ իրեն ներկայացող աննախընթաց պատեհութիւններ եւ միաժամանակ իր դէմ ցցուող լրջագոյն սպառնալիքներ: Հայաստանի տնտեսական խոցելի իրադրութեան, տարածաշրջանային քաղաքական տիրող պայմաններուն եւ սփիւռքի ընդհանրապէս անհաղորդ վերաբերումին դիմաց, մենք չենք կրնար ձեռնածալ մնալ: Կարելի չէ Հայաստանը եւ սփիւռքը տեսնել իրարմէ անկախ: Կենսունակ հայրենիք եւ ներգրաւուած գործունեայ սփիւռք, ճապէս իրարմէ կախեալ, մէկ անքակտելի ամբողջութիւն կը կազմեն: Այս իրականութիւններու լոյսին տակ, անհրաժեշտ է որ Հ.Բ.Ը.Մ.ը վերաքննէ իր նախապատուութիւնները, որոշելու համար, թէ ուր պէտք է կեդրոնացնէ իր ճիգերը եւ կարելիութիւնները: Ան նաեւ պէտք է յստակացնէ, թէ ինչպէս պիտի գնահատէ իր դերի եւ գործունէութեան արդիւնաւորութիւնը, ի շահ հայ ազգի բարգաւաճման:*

*Նախագահը նաեւ շեշտեց, թէ անհրաժեշտ է, որ ազգային այս նոր ռազմավարութեան ծիրէն ներս, Հ.Բ.Ը.Մ.ը որպէս միաւորող եւ համակարգող կազմակերպութիւն, գործակցական կապեր մշակէ այլ կազմակերպութիւններու եւ հիմնարկներու հետ, զօրացնելով իր գործօն անդամներու ցանցը, ամրապնդելով իր մարդուժը եւ ընդլայնելով իր կարելիութիւնները:*

*Ընդհանուր Ժողովը աւարտեցաւ Վեհափառ Հօր պատգամով եւ օրհնութեան խօսքով, զորս ընթերցեց Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Տէր Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան:*

### Հ.Բ.Ը.Մ.ի 110-Ամեակի Կալա Ճաշկերոյթ

*Շաբաթ երեկոյի շքահանդէսը տեղի ունեցաւ «Ճէզ էթ Լինքոլն Սէնթըր» սրահէն ներս, 500 հրաւիրեալներու մասնակցութեամբ: Իրարայաջորդ պաստառներու շարունակական հոսքով եւ հանդիսավարներ Քիմ Պարտագեանի, Անի Մանուկեանի եւ Սարգիս Ճէպէճեանի կողմէ պարբերական ելոյթներով, ներկաները ծանօթացան ու խանդավառուեցան Միութեան պատմութեամբ, անցեալի իրագործումներով եւ ապագային ուղղուած յուսալի փայլուն հեռանկարներով, յանձնառու գործարար երիտասարդութեան մասնակցութեամբ: Այս առթիւ մեծարուեցան եւ գնահատուեցան իրենց յաջողութիւններով հայութեան վարկը բարձրացնող եւ անոր ճանաչումին սատարող անձեր: Ամերիկեան ճէզ երաժշտութեան յայտնի եւ մեծագոյն արտադրիչներէն, Ճորճ Աւագեան, արուեստագէտ եւ արծաթեղէններու նախագծող Մայքըլ Արամ, գործարար Նիկոլ Գուլաճեան եւ ՄԱԿի Միջազգային Ոճրադատ Ատեանի պաշտօնատար, մարդկային իրաւանց իրաւապաշտպան Շիլա Փայլան:*

*Հաճելի անակնկալ մըն էր Նախագահ Պերճ Սեդրակեանի անձը, Միութեան հանդէպ իր ամբողջական նուիրումը, 40 տարիներ Կեդրոնական Վարչական Ժողովի իր ծառայութիւնը եւ 14 տարիներու անխոնջ Նախագահութեան շրջանը բնորոշող անկեղծ եւ կատակախառն տեսաերիզը, որ կը համադրէր իր հարազատներու եւ իրեն աշխատակից Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներու մտերիմ վկայութիւնները: Տեսաերիզին առընթեր, վարչականներ Տոքթ. Լեւոն Նազարեան եւ Երուանդ Տեմիրճեան, իրենց սրամիտ ակնարկութիւններով համեմեցին ելոյթը:*

*Այս առթիւ իր վկայութեան մէջ Արտա Նազարեան ընդգծեց, թէ Պերճ Սեդրական հաւանաբար հայ ազգը իր համընդհանուր էութեամբ, Հայրենիք, սփիւռք եւ Հայ Եկեղեցի որպէս մէկ ամբողջութիւն ընկալելու գաղափարախօսութեան ամէնաիրատես, արդիւնաւէտ եւ զօրաւոր ջատագովը կը հանդիսանայ: Իր Նախագահութեան շրջանին, ան յաջողեցաւ վերարծարծել Հ.Բ.Ը.Միութեան առաքելութեան հիմնական գաղափարաբանութիւնը, որ կը ձգտի հայութեան հզօրացումին, համաշխարհային տեսլականով:*

*Այս տեսլականը եւ անկէ բխող գաղափարախօսութիւնն էր որ իբր խորքային միտք, ուղղութիւն տուաւ եւ դրսեւորուեցաւ Միութեան 89-րդ Ընդհանուր Ժողովին եւ աշխատանքային հանդիպումներուն ու անոնց առընթեր 110-ամեակի տօնախմբութիւններու գեղարուեստական թէ ընկերային ձեռնարկներուն ընթացքին:*

## ՄԱՀԱԶԴ



**ՇԱՔԷ ԳՈՆԻԱԼԵԱՆ**
*Ծնեալ Պէրպէրեան, 1940-ին, Պէյրութ*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր, զոքանչին եւ հարազատին՝ Շաքէ Գոնիալեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 8 Նոյեմբեր 2016-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Լոս Անճելըսի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:*

*Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 15 Նոյեմբեր 2016-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena, CA 91107, որմէ ետք հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Հոլիվուտ Հիլզի Ֆորէսթ Լոն գերեզմանատան մէջ:*

*Սգակիրներ՝*
*Ամուսինը՝ Տիար Գրիգոր Գոնիալեան*
*Զաւակները՝ Հուրի եւ Լեւոն Քէշիշեան*
*Լենա եւ Յովսէփ Քպրսլեան*
*Յոլին եւ Համօ Մաթոսեան*
*Թոռները՝ Սարմէն Քէշիշեան եւ Տաւիդ Մարգարեան*
*Սարին եւ Արմէն Թուրեան*
*Արման եւ Ատրինէ Մաթոսեան*
*Եւ համայն Գոնիալեան, Թաւլեան, Այնթապլեան, Քասապեան, Պէրպէրեան, Գայայեան, Իմմիեան, Քէշիշեան, Մաթոսեան, Քպրսլեան, Թուրեան եւ Մարգարեան ընտանիքներ:*

*Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւններ կատարել իր յիշատակին Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ:*

## ՀԱԼԷՊԸ ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ

Շարունակուած էջ 8-էն

*ւարտեց շնորհակալական խօսք ուղղելով Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան՝ իր յարատեւ աջակցութեան ու ներդրումին համար, յատկապէս վերջին հինգ տարիներու ընթացքին: Վերապատուելին նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց ԱՀԱԸ-ի Գործադիր Տնօրէն Պրն. Խանճեանին՝ Սուրիահայ ժողովուրդին իր անսակարկ նուիրումին ու զօրակցութեան համար:*

*Ձեռնարկը աւարտին հասաւ Վեր. Պերճ Կիւլլէեանի օրհնութեան աղօթքով որուն յաջորդեց յատուկ հիւրասիրութիւն:*

*ԱՀԱԸ-ը երախտապարտ է բոլոր անոնց, որոնք արձագանգելով աջակցութեան կոչին, այդ երեկոյ գոյացուցին $12,000-ի գումար մը կարիքաւոր Սուրիահայ ընտանիքներուն: Յատուկ շնորհակալութիւն Ճորճ Խորոզեանին՝ իր 70րդ տարեդարձին առիթով կատարած $10,000 տոլարի նուիրատուութեան համար:*



VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆին
Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com


## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



**ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆ**

*ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆի մահուան քառասունքին առթիւ Կիրակի, 20 Նոյեմբեր, 2016, առաւօտեան ժամը 11:00ին այցելութիւն պիտի տրուի հանգուցեալի շիրիմին, Հոլիվուտ Հիլզի գերեզմանատան մէջ:*

*Այնուհետեւ հոգեճաշ պիտի սպասարկուի Արպաթ ճաշարանին մէջ, 711 South San Fernando Blvd. Burbank:*

*Սգակիրներ՝*
*Այրին Տիկ. Սիւզան Սինանեան եւ զաւակը Սամուէլ*
*Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Արմինէ Սինանեան եւ զաւակները*
*Հօրաքոյրը՝ Տիկ. Սոնա Ասատրեան*
*Մօրաքոյրը՝ Տիկ. Հռիփսիմէ Պարսամեան*
*Տէր եւ Տիկ. Կարէն եւ Անահիտ Հայրապետեան*
*եւ համայն Սինանեան, Հայրապետեան, Ջիլինկիրեան, Ասատրեան, Տէր Սահակեան, Սագոյեան, Պէրպէրեան, Սերիմեան, Գարամանուկեան, Տէյիրմէնճեան եւ Աւետիսեան ընտանիքները:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*ԿԷՐԻ ՍԻՆԱՆԵԱՆի մահուան տխուր առիթով հանգուցեալի այրին՝ Սիւզի Սինանեան եւ հարազատները, իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Արեւմտեան Թեմի Հայց. Եկեղեցւոյ բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, Արժ. Տ. Մանուկ Աւ. Քհնյ. Մարգարեանին: Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան, Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնին, «Մասիս» շաբաթաթերթին, Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմնին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, գրութեամբ, ելոյթներով, հեռաձայնով, ծաղկեպսակ ուղարկելով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով մասնակից եղան իրենց սուգին:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Կէրի Սինանեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթին փոխան ծաղկեպսակի իրենց նուիրատուութիւնները կը կատարեն հետեւեալները:*

| | |
|---|---|
| Տէր եւ Տիկ. Թադէոս Քէօրողլեան | $500 |
| Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան | $200 |
| Տիկ. Կարինէ Ղազարեան | $200 |
| «Փարամազ» մասնաճիւղ | $200 |
| Մի ոմն | $200 |
| Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Խոտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Խոտանեան | $100 |
| Տօքթ. եւ Տիկ. Հանրիկ Սարաֆեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրողլեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վահէ Աջապահեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ստեփան Յովակիմեան | $100 |
| Տէր եւ Տիկ Վարդան Տեփոյեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Պետրոս Խոտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդիվառ Կարկուտեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Վարդան Քոճապապեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գալուստ Տէրտէրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Գրիգոր Գրիգորեան | $100 |
| Տիկ. Մարիա Ճալթորոսեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Սուրէն Խուտանեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ճորճ Յակոբեան | $100 |
| «Սապահ Կիւլ» մասնաճիւղ | $100 |
| Տէր եւ Տիկ. Վազգէն Պողարեան | $100 |
| Տիար Կրեկ Ջիլինկիրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան | $100 |
| Տիար Մինաս Մութաֆեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Միհրան Խաչատուրեան | $100 |
| Տէր եւ Տիկ. Տիգրան Սարաֆեան | $50 |
| Տէր եւ Տիկ. Մարտիրոս Մուրատեան | $50 |
| Տիար Քրիս Կարսեւանեան | $50 |
| Տիար Ալպեր Մինասեան | $50 |


ARMENIA FUND'S 19TH INTERNATIONAL THANKSGIVING DAY
November 24
Telethon 2016
MY
ARTSAKH
LIVE BROADCAST COAST-TO-COAST | 10am-10pm PST
CENTRAL CALIFORNIA
KGMC OTA Ch. 43.6 & Ch. 13.1
Comcast Xfinity Ch. 375
Northland Ch 2 & Ch. 9
Noor TV Ch. 31.7
SOUTHERN CALIFORNIA
Armenian Channels & KVMD Network
SAN FRANCISCO & BAY AREA
KTSF OTA Ch. 26.1 • DirecTV Ch. 26
Dish Network Ch. 26 • Comcast Ch. 8
AT&T U-verse Ch. 8
Las Vegas
Cox Ch. 274
12 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENIAFUND.ORG
Facebook.com/ArmeniaFund
Twitter.com/ArmeniaFund
instagram.com/ArmeniaFund
YouTube
YouTube.com/ArmeniaFundUS
VISIT & DONATE: www.ArmeniaFund.org or Call:1-800-888-8897
ArmeniaFund